№ 204 ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 204

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։
ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝
ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վ.բժինի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նարաբեան
(մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան)
վերադառնալով Կովկասի հանքային ջրերից՝ կը վերսկսէ հիւանդների ընդունելութիւնը սեպտեմբերի 10-ից։ Հասցէն՝ Սօլօլակ, Րոտիշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(և.հ.կ.) առ. 784. 25—11

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ
վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը՝ առ. ժամը 9—2 և երեկ. ժ. 5—7։
Վելիամինօվսկայա փող. № 4.
(ա. օ.) առ. 871. 0—2

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13—15 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Սոպոցկինա և Դրուսկենիկի շրջանում սեպտ. 12-ին սկսվեց կռիւ գերման զօրքերի դէմ։ Աւստրիական զօրքերը նահանջում են դէպի արևմուտք։ Լայն կերպով օգտվելով դէպի Կրակով տանող երկաթուղագծերից և վանելով երկու գունդ, մենք գրաւեցինք Տուրկան»։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբից. «Սոպոցկի և Դրուսկենիկի մօտ եղած կռիւները վերջացան գերմանացիների նահանջով։ Թշնամին, հիւսիսից բռնելով Օսովեցին, թնդանօթային կռիւ սկսեց ամրութեան հետ։

«Գալիցիայում մենք գրաւեցինք Դիմբիցան։ Պերեմիշլից դէպի Սանօկու նահանջող խումբը ենթարկվեց մեր թնդանօթաձիգների հրազարկութեանը և փախաւ թողնելով ռազմամթերք, սայլեր և աւտոմոբիլներ։ Ուժոկ լեռնանցքում մենք ջարդեցինք թշնամու վաշտին, վերցրինք նրա թնդանօթաձիգները և շատ գերիների և, հետապնդումը շարունակելով, մտանք Ունգարիայի սահմանները»։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Ռուս ժուռնալիստ Շվարցը սեպտեմբերի 9-ին հեռագրով խնդրել է շվէդական թագուհուն միջոցներ ձեռք առնել գերմանացիների տմարդութեան դէմ, որ նրանք ցոյց են տալիս անզէն ռուսների վերաբերութեամբ, որոնք 22 օր է կալանաւորված են Համբուրգում, ուր նրանք զանազան տեսակ ծաղրի ու ծանակի են ենթարկվում։ Շվարցը խնդրել է նոյնպէս հիւանդ ռուսներին տեղափոխել Շվէդիա։ Թագուհին նամակով պատասխանել է, որ նա կարգադրել է պարզել, թէ կարող են արդեօք ազատվել ռուսները գերութիւնից։ Շնորհիւ թագուհու միջամտութեան, 134 հոգի ազատվել են Համբուրգում և եկել են Շվէդիա։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պրուսական ծովային մինիստր է նշանակված գեներալ Գօգենբօրն, իսկ գեներալ ֆօն-Էյնեմ նշանակված է 3-րդ զօրաբանակի հրամանատար։

Կամաւորների ուսուցումը Գերմանիայում կատարվում է ուժեղացած տեմպով։

Էլզասի լանդշտուրմը, նրա անբարեյուսութեան մասին եղած կասկածի պատճառով, որոշված է տեղափոխել Բաւարիա։

Գերմանիայում նորերս կազմվել են հեծելազօրքի տասը նոր դիվիզիաներ, որոնք բաժանված են արևելեան և արևմտեան ճակատների միջև։

ՎԱՐՇԱՎԱ.— Առաւօտեան Վարշավայի գլխին երևացած «Ցեպպելինը», որ երեք ռումբ նետեց, որոնցից մէկով վիրաւորվել են 3 զինուոր, մեր զօրքի կողմից հրազարկութեան ենթարկվեց և ընկաւ Եաբլօնի մօտ, Վարշավայից ոչ հեռու։ «Ցեպպելինը» բերվեց Վարշավա։

Մի ուրիշ «Ցեպպելին», որ նոյնպէս երևաց Վարշավայի գլխին, հրազարկութեան հանդիպելով փոխեց իր ուղղութիւնը։ Քաղաքի շրջակայքում նա նորից ենթարկվեց հրազարկութեան և ընկաւ հողի վրա։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերմանացիների փորձը՝ անցնել Նեմանը Դրուսկենիկի մօտ և յարձակում գործել՝ ետ մղվեց մեր զօրքի կողմից։ Գերմանական զօրքերի նահանջը, Սուվալկի նահանգում ունեցած իրանց համար անաջող կռիւներից յետոյ, սովորական բնոյթ է ընդունել։

Օսովեցի բերդը աջողութեամբ շարունակում է կռւել գերմանական ծանր արտիլլերիայի հետ։

Գալիցիայում առանձին յամառութեամբ աչքի ընկան Ուժոկ անցքի մօտ եղած կռիւները, ուր ունգարները ջարդվեցին երեք դիրքերում և նահանջեցին անկարգ խմբերով։ Մենք վերցրինք թնդանօթների մեծ թիւ և հարիւրաւոր գերիներ։ Հետապնդումը շարունակվում է։

Բոլոր հաղորդակցութիւնները Պերեմիշլի հետ կտրված են. բերդի պաշարումը մնում է կրաւորական։

Վիսլոկի անցումները բռնված են մեր կողմից։ Աւստրիական զօրքի ետևի մասերը ետ են դառնում Դունայեց այն կողմը։

Սեպտեմբերի 11-ին Բուխարեստի համալսարանի պրօֆեսօրական կազմը մինիստր-նախագահին մի պետիցիա ներկայացրեց այն մասին, թէ ցանկալի է, որ Ռումինիան անմիջապէս պատերազմական գործողութիւններ սկսի Աւստրօ-Ունգարիայի դէմ։ Բուխարէստում յօգուտ պատերազմի փողոցային մի քանի մեծ ցոյցեր են եղել։ Առանձնապէս հսկայական էր սեպտեմբերի 12-ի ցոյցը։ Համալսարանի պրօֆեսօրները ճառերով դիմեցին ամբոխին, կոչ անելով ազգին դէպի միութիւն և պահանջելով շուտափոյթ պատերազմ Աւստրօ-Ունգարիայի հետ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13—15 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Ծովակալութիւնը հաղորդում է. «Փոխ-ծովակալ Պատէյը տեղեկացնում է հեռագրով, որ Ֆրիդրիխ-Վիլհէլմսհաֆէն քաղաքը և նաւահանգիստը գրաւվել է անգլիացի զօրքերով առանց դիմադրութեան։ Գերմանացիների զինված ուժերը կենտրոնացան Գերբերտգէէում, ուր և սրի քաշվեցին։ Ֆրիդրիխ-Վիլհէլմսհաֆէն քաղաքում ծածանվում է բրիտանական դրօշակ և դրված է բերդապահ զօրք»։

ՌԷՅՄՍ.—Երէկ գերմանացիք վերսկսեցին տաճարի ռմբակոծութիւնը։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւնը սեպտ. 13-ից յայտնում է. «Ձախ զօրաթևում շարունակվում է չափազանց տաք ճակատամարտ Սոմյի և Ուազի միջև։ Ուազի և Սուասոնի միջև ֆրանսիական զօրքերը աննշան առաջացել են։ Թշնամին փորձ չարեց յարձակման դիմել։ Սուասոնի և Ռէյմսի միջև լուրջ փոփոխութիւններ չեղան. կենտրոնում Ռէյմսի և Վերդէնի միջև դրութիւնը անփոփոխ է։ Վէվրում թշնամին կարող եղաւ անցնել Մաասը Սէն-Միէլ շրջանում, բայց ֆրանսիացիների ձեռնարկած յարձակողական շարժումը արդէն ցրեց նրա մեծ մասին դէպի գետը։ Վէվրից դէպի հարաւ ֆրանսիացիների արշաւանքը շարունակվում է։ 14-րդ գերմանական զօրաբանակը նահանջեց խոշոր կորուստներ տալուց յետոյ։ Լօթարինգիայում և Վօգէզներում գերման զօրքերի քանակը, ըստ երևոյթին, պակասել է. առանձին զօրախմբերը, որոնց աջողվեց մի քանի տեղերում ետ մղել ֆրանսիական առաջաւոր զօրամասերին, իրանց հերթին վանվեցին ֆրանսիական պահեստի գնդերից»։

ՊԱՐԻԶ—Սեպտ. 13-ի պաշտօնական հաղորդագրութիւնը. «Թշնամին յարձակում գործեց ողջ ճակատի վրա և ամենուրեք ետ մղվեց. Ֆրանսիական զօրքը ձախ թևից առաջ է շարժվում։ Մաասի աջ ափին դրութիւնը նոյնն է։ Վէվրում ֆրանսիացիները շարունակում են հետզհետէ առաջ շարժվել»։

ԼՕՆԴՕՆ.—Մամուլի բիւրօն հաղորդում է, որ թշնամին մեծ յարձակում գործեց ողջ գծի վրա։ Ետ են մղված մի քանի կատաղի յարձակումներ։ Թշնամին աչքի ընկնող կորուստներ ունեցաւ։

ԼՕՆԴՕՆ.—Սեպտ. 6-ին «Ֆօքս» նաւը խարիսխ ձգեց Լիւդերիտսի քաղաքի առջև, գերմանական Հարաւ-Արևմտեան Աֆրիկայում։ Ափ իջած օֆիցէրները պահանջեցին, որ քաղաքը անձնատուր լինի, սակայն սպիտակ դրօշակը արդէն վաղուց ծածանվում էր քաղաքային տան գլխին։ Այդ ժամանակ ափ իջաւ և արշաւախումբը։ Գերմանական գարնիզօնը նահանջել էր դեռ նախօրեակին (?), քանդելով երկաթուղու գիծը և հեռագրի կայարանը։ Տեղացիները գոհ են քաղաքը գրաւող անգլիացիներից։

ՊԱՐԻԶ.—Օգտվելով մառախուղից գերմանական մի աէրօպլան առաւօտեան ժամը 11-ին թռաւ Պարիզի վրայով և մի քանի ռումբ նետեց Էյֆէլեան աշտարակի մօտ։ Մէկը ընկաւ Ֆրէյսինէ փողոցում և վիրաւորեց անցնող մի ծերունու և նրա աղջկան։ Ենթադրում են, որ ռումբերը ձգված են եղել Էյֆէլեան աշտարակի հեռագրական կայարանը ոչնչացնելու նպատակով։

ԲՕՐԴՕ. — Սանլիսի ռմբակոծութիւնը գերմանական զօրքերի կողմից քաղաքին միայն աննշան վնասներ է հասցրել։ Նիւբեկուրում գերմանացիները բաց արին Պուանկարէի տոհմային դամբարանը և այնտեղ թաղեցին իրանց զինուորներին։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն։ Ձախ թևում մեծ ճակատամարտը շարունակվեց։ Ֆրանսիացիները նշանաւոր աջողութիւններ ունեցան։ Ուազի, Սոմմի և Ռէյմսի միջև ձգվող ողջ ճակատում գերմանացիները մի քանի տեղ կատաղի յարձակումներ գործեցին, բայց ետ մղվեցին։ Ֆրանսիական և գերմանական տրանշէների գծերը իրարից հեռացված են մի քանի հարիւր մետրով։ Ռէյմսի և Սուէնի միջև եղած կենտրոնում պրուսական գվարդիան անաջող յարձակում գործեց և ետ մղվեց Բերրի-Նաշլաբբեսի բայօնը, որը գտնվում է Սուէնի և Արգօնի միջև։ Երէկ թշնամին յարձակում գործեց Սիւպպի և Շալօն-սիւր-Մառնի միջև ընկած ճանապարհով և երկաթուղային գծով։ Երեկոյեան սակայն նրանք բռնեցին իրանց տեղերը։ Արգօնի և Մաասի միջև թշնամին ոչ մի յարձակում ցոյց չը տուեց։ Մաասի աջ ափում դրութիւնը անփոփոխ է։ Հարաւային Վէվրում գերմանացիները բռնել են այն ճակատը, որը տանում է Սէնտ-Միէլի միջով դէպի հիւսիս-արևելք Պօնտ-Մուսսօնի վրա։ Լօտարինգիայում, Վօգեզներում և Էլզասում դրութիւնը անփոփոխ է։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
13—15 սեպտեմբերի

ԲԷԼԳՐԱԴ.—Սեպտ. 11-ին թշնամին մեծ զօրամասերով փորձեց գրաւել Բէլգրադի մօտ Սավայի կղզիներից երկուսը, բայց կորցրեց երկու գումարտակ։ Սերբերը գրաւեցին երկու կղզին։ Երեկոյեան սերբերը ծանր թնդանօթներից կրակ բացին Զէմլինի ետևում գտնվող թշնամու մարտկոցների դէմ։ Կրակի ներգործութիւնը շատ լաւ էր, որովհետև թշնամու թնդանօթները ստիպված էին շուտով լռել։ Երեք օր տևող ռմբակոծութիւնից Բէլգրադը կրեց 20 միլիօն դինարից աւելի վնաս։ Բոլորովին քարուքանդ է եղել քաղաքի ամենալաւ մասը՝ Տէրազիան։ Կան վնասուածքներ նաև միւս թաղերում։ Կան մարդկային զոհեր։

Լոյս սեպտ. 11-ի գիշերը սերբերը վանեցին թշնամուն Ադէից դէպի Ցիգանլիա, պատճառելով նրան խոշոր վնաս։ Այդ գիշերվայ ընթացքում թշնամին ժամանակ առ ժամանակ ռմբակոծում էր Բէլգրադը։ Ընդհանուր առմամբ բոլոր դիրքերում մեր զօրքերի դրութիւնը շատ բաւարար է։

ՆԻՇ. — Սերբիական և չերնոգօրական զօրքերը, որ գնում էին Սարաեվօյի վրա, հասել են Ռոմանիա սարին։ Ողջ ազգաբնակութիւնը ցնծագին ողջունում է դաշնակից զօրքերին։ Շատերը կամաւորներ են մտել նրանց զօրքի շարքը։

Զվօրնիկ-Լօզնիցայի ճակատում դրութիւնը անփոփոխ է։ Լօզնիցա-Ռաչայի ճակատում թշնամին սեպտեմբերի 12-ի գիշերը մի քանի անգամ յարձակման դիմեց, բայց երանուն կերպով ետ մղվեց։ Միտրովիցա-Շաբաց ճակատում ընդհարումներ եղան։

Բէլգրադի զօրքը նեղեց թշնամուն Ադացի-Գանլիա և Ալամալա կղզիներում, հասցնելով նրան լուրջ վնաս։ Սպանված աւստրիացիների թւում կան մի գնդապետ և երկու լէյտենանտ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
13—15 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.—Գերմանացիք Տրիօկուրում քանդեցին Լիւսիէն Պուանկարէի տունը, իսկ Նիւբէկուրում՝ Ռայմոնդ Պուանկարէի ծնողների տունը. սեպտ. 12-ին գերմանացիք առանձնապէս կատաղի կրակի ենթարկեցին Պուանկարէի գիւղը և անձնական սեփականութիւնը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—«Օրէնքների ժողովածուի» մէջ հրատարակված են մինիստրների խորհրդի հետևեալ որոշումները, որոնք հաստատվել են Թագաւոր Կայսրից. 1) ժամանակաւորապէս աւելացնել՝ յօգուտ Կարմիր Խաչի՝ երկաթուղիներով ճանապարհորդող անձանց տոմսերի գինը՝ 3-րդ կարգի իւրաքանչիւր տոմսի գինը 10 կ., 2-րդ կարգի՝ 15 կ., և առաջին կարգի՝ 20 կ., 2) 1914 թ. իւրաքանչիւր հեռախօսի գինը աւելացնել 10 ռուբլով բացի Ֆինլանդիայի և ծառայական հեռախօսներից, 3) ժամանակաւորապէս փոխել զինուորական ծառայութեան կանոնադրութեան որոշումներից մի քանիսը, որի մասին առանձին հաղորդագրութիւն հրատարակվեց օրերս, և այլն։

Բարձրագոյնս հաստատվեց մինիստրների խորհրդի որոշումը, որի համաձայն, 87-րդ յօդուածի կարգով, բոլոր գործարանները պարտաւորվում են առաջին հերթին պատրաստել զօրքի և նաւատորմի անհրաժեշտ բոլոր պատուէրները։

Արտաքին գործերի մինիստրութիւնը տեղեկացրեց Կարմիր Խաչի գլխաւոր վարչութեանը, որ եապօնական Կարմիր Խաչը իր սանիտարական խումբն է ուղարկում մեր պատերազմի դաշտը։

Զօրքի նոր կազմակերպութեան հետևանքով՝ թիւրքական զօրքի թիւը հասել է կէս միլիօնի։ Դրան պէտք է աւելացնել 350,000 կամաւորներին, վատ վարժված և անկանոն զինված ժանդարմներին, որոնք պէտք են գալու Թիւրքիայի անյուսալի բնակչութեան կարգը պահպանելու։

ՈՒՐՄԻԱ.—Տեղիս պարսկական իշխանութիւնը և վաճառականութիւնը ներկայացան ռուսաց հիւպատոսին, ուրախութիւն յայտնեցին ռուս զէնքի աջողութիւնների առիթով և խնդրեցին ռուս կառավարութեանը իրազեկ անել, որ նրանք պատրաստ են ամէն տեսակ զոհաբերութիւնների։

ՊԵՏՐՕԳՐԱԴ — «Times»-ին հեռագրում են Օստէնդէից, որ սեպտ. 13-ին պրինցներ Ֆրիդրիխ-Վիլհէլմը, Ադալբէրտը և Կարլը մեռան Բրիւսսէլի հիւանդանոցում՝ ստացած վէրքերից։

ՍԱԼՕՆԻԿ.—Սպառազինումները շարունակվում են. գալիս են նորակոչ զինուորներ Արշիպէլագոսի կղզիներից։

ՄՕՍԿՎԱ.—Բացվեց քաղաքների համառուսական միութեան լիազօրների համագումարը վիրաւորներին օգնութիւն ցոյց տալու վերաբերմամբ։ Եկել են 100 պատգամաւոր, որոնց թւումն է և Կալիշի քաղաքագլուխ Բուկօվինսկին։ Նախագահ Բրեանսկին ողջունեց պատգամաւորներին, նրանց ծանօթացրեց համագումարի ծրագրի և միութեան կարիքների հետ։

Կոմսուհի Բօբրինսկայան սննդական կէտեր է կազմել Մոսկվայի և Կիէվի համար։

Գիւղատնտեսները և գիւղատնտեսական ընկերութիւնները առաջարկութիւն են ստացել իրանց ագարակներում պահել Վիլհէլմ կայսրի՝ Արևելեան Պրուսիայում ունեցած կալուածքներից վերցված անասունները։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Մինիստրների խորհրդի դիւանատան հիւանդանոցը վիրաւորների համար բացվել է մինիստրների խորհրդի նախագահի տանը։ Կոմիտէտին գլուխ է կանգնել Գորեմիկինի կինը։ Հիւանդանոցը պահելու միջոցների մի մասը տուել են Գորեմիկինն ու իր կինը, միւս մասը տալու են մինիստրների խորհրդի դիւանատան պաշտօնեաները։

Կոնսերվատորիայի մեծ դահլիճում կայացաւ սլաւօնական մեծ միտինգ մասնակցութեամբ սլաւօնական ընկերութեան ներկայացուցիչների և լեհ գործիչների։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը քննելով նորերս ռուսահպատակութիւն ընդունող օտարների զինուորակոչութեան հարցը՝ որոշեց մինչև 30 տարեկան հասակ ունեցողներին ենթարկել զինուորակոչութեան ընդհանուր հիմունքներով, իսկ 30-ից մինչև 43 տարեկան հասակ ունեցողներին, զինուորական խորհրդի բժշկական վկայութիւններից յետոյ, կամ երկրապահ զինուորներ կարգել կամ ազատ արձակել զինուորակոչութիւնից։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—«Գեբէն», «Բրեսլաու» և թիւրքական նաւերը շարունակել են մանել Սև ծովը նաւատորմի զանազան կոմբինացիաներով։

ՏՕԿԻՕ.—Եապօնացիները յարձակում գործեցին Ցինդաօյի պաշտպանողական առաջին գծի վրա։

ՀՌՕՄ.—«Մէսսաջէրօյին» հեռագրում են Բարիից, որ դաշնակիցների ռազմանաւերը վերսկսեցին ռմբակոծութիւնը Կատարրօյի նաւահանգստի դէմ, նաև շրջակայքի բոլոր բերդերի դէմ։

Ծովակալ Բուէ-դէ-Լապէյրէրի հեռագրի համաձայն, Պէլագօզա ուժեղ բերդը քարուքանդ է արված։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
14—15 սեպտեմբերի

ՍԱԼՕՆԻԿ.—Ալբան աւազակները յարձակում գործեցին Սերբիայի վրա սպառնալով Գօստիվարին։ Կառավարութիւնը հետապնդում է աւազակներին ուժեղ զօրախմբերով։

ՇԱՄԱԽԻ.—Սեպտ. 12-ի երեկ. ժ. 6 ու 30 ր. զգացվեց ուժեղ երկրաշարժ հիւսիս-հարաւ ուղղութեամբ։

ՊԵՏԻԳՕՐՍԿ.—Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն պատուիրագրել է տօնել բոլոր դպրոցներում հոկտ. 2-ին Լէրմոնտօվի ծննդեան 100-ամեակը։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ամերիկեան գերմանասէրները պահանջում են Միացեալ Պետութիւնների կառավարութիւնից՝ կազմել մի պատգամաւորութիւն Տաֆտի և Ռուզվէլտի գլխաւորութեամբ, որպէսզի այդ պատգամաւորութիւնը համոզէ դաշնակից մեծ պետութիւններին համաձայնել հաշտութեան։

◆ Յայտնի տնտեսագէտ Զոմբարտը ապացուցանում է, որ Գերմանիայի տնտեսական դրութիւնը փայլուն վիճակի մէջ է։ Պատերազմը ոչ միայն քայքայում առաջ չէ բերում, այլ ժողովրդական պաշտպանութեան գործում մտցնում է նոր միջոցներ և կենդանացնում է մի շարք արտադրութիւններ։ Մեծ յոյսեր են դրվում գերիների աշխատանքի վրա։

◆ Պարզվում է, որ գերմանացիք Ռէյմսը ռմբակոծեցին միայն իրանց նահանջը թագցնելու նպատակով։

◆ Մոսկվայում ստացված տեղեկութիւնների համաձայն, Գերմանիան փորձել է անջատ հաշտութիւն կնքել Ֆրանսիայի հետ և առաջարկել է նրան շահաւէտ պայմաններ։ Գերմանիան հրաժարվում է տէրրիտօրիալ նուաճումներից և պատերազմական տուգանքից։ Ֆրանսիան պարզ պատասխան տուեց. «Յայտնի է Գերմանային Լօնդօնում կայացած համաձայնութեան մասին»։

◆ Էրվէն գրում է. «Ռէյմսի տաճարը աւերելու դիմաց մեր վրէժխնդրութիւնը այն կը լինի, որ պատւաւոր պահակախումբ կարգենք Բեռլինի, Դրեզդէնի և Միւնխէնի գրադարանների, թանգարանների և տաճարների վրա։ Ո՛չ, ֆրանսիական ոչ մի թնդանօթ չի ռմբակոծի Կէօլնի տաճարը, աշխարհիս այդ 8-րդ հրաշալիքը»։

◆ Աւստրիացիք իրանց վերջին ուժերը հաւաքել են Կրակովի մօտ, սպասվում է վճռական ճակատամարտ։ Ենթադրում են, որ Կրակովը պաշտպանող լեհերը կը յանձնեն քաղաքը ռմբակոծութիւնից խուսափելու համար։ Այդպիսով ռուսների ճանապարհը դէպի Սիլեզիա բացվում է։

◆ Ալբանիայի հարաւային նահանգներում ապստամբութիւն է։

◆ Անգլօ-ֆրանս-գերմանական ճակատամարտը վերսկսեցին ուժեղ թափով։

◆ Ռումինիայի, Յունաստանի և Բուլգարիայի միջև կայացել է համաձայնութիւն, որի ուժով այդ պետութիւնները պարտաւորվում են թոյլ չը տալ Թիւրքիային բացարձակ զինուորական օգնութիւն ցոյց տալ Գերմանիայի և Աւստրիայի։ Եթէ Թիւրքիան չէզոք մնայ, այն դէպքում այդ երեք պետութիւնները պարտաւորւում են պահպանել չէզոքութիւն։

◆ Մարմարա ծովում երևացել են գերմանական շատ շոգենաւեր, որոնք զօրքեր են ափ իջեցնելու։

◆ Ֆրանսիայում բնակվող հայերից մօտ 150 հոգի—զանազան խաւերի պատկանող—պատերազմի սկզբին որպէս կամաւոր մտել էին Ֆրանսիական բանակը։ Իսկ վերջերս էլ դարձեալ 25 հայեր Մարսէյլից գնացել են պատերազմի դաշտը Ֆրանսիական բանակի շարքերում կռւելու։ Յիշեալ կամաւոր զինւորները մի կոչ են հրատարակել, որով իրանց պատրաստակամութիւնն, հիացմունքն ու համակրանքն են յայտնում Ֆրանսիային և հրաւէր կարդում հայերին՝ մտնել կամաւորների բանակը և օգնել ազատասէր Ֆրանսիային։

◆ Լվովում կարգաւկանոնը պահպանում են 500 տեղացի կամաւոր-ոստիկաններ։

◆ Աւստրիան զէնքի է կանչում լանդշտուրմին, թւով կէս միլիոն մարդ։

◆ Հաղորդում են, որ պրինց Վիդը մեկնում է Կ. Պոլիս, տանելով Վիլհէլմ կայսրի կարևոր յանձնարարութիւնը։

◆ Էն գետի վրա գերմանացիք ունեցան խոշոր կորուստներ։ Միայն վիրաւորների թիւը 120,000-ի է հասնում։ Բազմաթիւ ձիեր և մարդիկ խեղդվեցին։

◆ Յոյները ուժեղ զօրաբանակ են կենտրոնացրել Բուլգարիայի դէմ։

◆ Վիեննայում ամեն օր պալատական խորհրդակցութիւններ են Բերխտոլդի մասնակցութեամբ։ Կեանքը մեռել է։ Քաղաքում կան մօտ 300,000 վիրաւոր, որոնք թափված են թատրոնների շէնքերում։

◆ Բերլինում ցոյցեր են պատերազմի և Վիլհէլմի դէմ։

◆ Իտալիան աւստրիական սահմանի մօտ կենտրոնացրել է 5 զօրաբանակ։

◆ 70,000 զինւոր Կանադայից հասել են Անգլիա։

◆ Հաղորդում են, որ Պերէմիշլը ռմբակոծվում է ռուս զօրքերից։

◆ Աւստրիան բռնեց 18 վագոն ռազմամթերք, որոնք ուղարկվում էին ռումինական զէնքի համար։ Աւստրիայի և Ռումինիայի յարաբերութիւնները լարված են։

◆ Վիլհէլմ կայսրը անձամբ հրամանատարելու է գերման զօրքերին ռուսների դէմ։

◆ Աւստրիացիք հրաժարվեցին ազատել Մակսիմ Կովալէվսկիին։

◆ Ֆրանսիացիք գերմանացիներից վերցրել են 3 միլիոն փամփուշտ միայն մի ճակատամարտում։

◆ Յունական ռազմի նաւատորմը դիմել է Դարդանէլի կողմը։

◆ Գերմանական զօրքերը արևելեան ռազմադաշտում բաժանվել են 3 խմբի. մէկը շարժվում է Իւբբուրգից դէպի Սուվալկա, երկրորդը՝ Գրաևոյից դէպի Սոլդաու, իսկ երրորդը՝ Կոնինից դէպի Չէնստոխով։

◆ Ֆրանսիական լրագիրները գրում են, որ եթէ գերմանացիք մի երկու օր շարունակ աջողութիւն ունենան, շատ կարելի է որ նրանք երկրորդ անգամ արշաւեն դէպի Պարիզ։

◆ «Н. В.»-ում կարդում ենք. «Երբ գերմանացիք մտան Սուվալկա, տեղական հրէաները նրանց մատուցին աղ ու հաց, արտայայտելով իրանց ուրախութիւնը քաղաքը գերման զօրքերով գրաւելու առիթով։ Այդ տեղեկութիւնը հաստատում են շատ ականատեսներ, որոնք գրգռված են հրէաների այդ լրբութիւնից, որոնք քանիցս յայտնեցին, թէ իրանք անձնուէր են Ռուսաստանին։ Երբ ռուսները դուրս արին գերմանացիներին Սուվալկից, իշխանութիւնները կալանաւորեցին 15 հրէայի»։

◆ «Правительственный Вѣстникъ»-ը հերքում է այն բոլոր լրագրական տեղեկութիւնները, թէ երրեակ համաձայնութեան մեծ պետութիւնները քայլեր են արել հաշտութեան հարցի առթիւ։ Երրեակ համաձայնութիւնը գտնում է, որ վաղաժամ է բանակցութիւններ վարել հաշտութեան մասին։

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ վերջին օրերը Բոսֆորի ջրերում երևում են բռնի մահացած մարդկանց շատ դիակներ։

◆ Աբդիւլ-Համիդը դիմեց Թիւրք կառավարութեանը և երիտասարդ Թիւրքերի կոմիտէտին նամակներով, որոնցով, յենվելով երկարամեայ փորձառութեան վրա, նախազգուշացնում է, որ երրեակ համաձայնութեան հետ, մանաւանդ Ռուսաստանի հետ ընդհարումը Թիւրքիային կը նետէ ուղղակի կործանման անդունդը։

◆ Ֆրանս-անգլիական ռազմի նաւատորմը հրամանի է սպասում ռմբակոծելու Դարդանէլը։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ հակակառավարական անկարգութիւններ տեղի ունեցան Զմիւռնիայում։ Կռիւը սկսվեց նաւահանգստում։ Զէնքի կանչված բեռնակիրները քարուքանդ արին սրճարանները և կրպակները։ Նահանգապետը, երկիւղ կրելով թէ զօրքերը կը միանան ջարդարարների հետ, հրամայեց պահել նրանց զօրանոցներում։ Ջարդը անցաւ քաղաք։ Հայերը և յոյները կազմակերպւում են ինքնապաշտպանութեան։ Փողոցներում կռիւներ են, շատ թաղերում՝ հրդեհներ։ Աւստրիացի և գերմանացի նաւաստիներն անմասն չը մնացին ջարդից։

◆ «Համիդիէ» զրահանաւը մեկնել է անյայտ ուղղութեամբ։

◆ «Нов. Вр.»-ում տպված է Թալէաթ-բէյի յայտարարութիւնը թէ՝ Թիւրքիան վճռել է խուսափել ամեն տեսակ արկածախնդրութիւնից։

◆ Վիեննայի և Սօֆիայի օսմանեան զինւորական գործակալները շտապով մեկնել են Կ. Պոլիս։

◆ Թոյլատրված է Ռուսաստանից ներմուծել Թիւրքիա հաց, միս և այլ կենսական մթերքներ, պայմանով միայն, որ դրանք յատկացվեն միայն հէնց Թիւրքիայի համար։

◆ Թիւրքերը Յունաստանի դէմ հանդէս են բերելու 400,000 զինւոր։

◆ Ռուսահպատակների պաշտպանութիւնը Կ. Պոլսում յանձնվում է Իտալիային և մասնաւորապէս Կ. Պոլսի իտալական դեսպանին։

◆ «Թանինը» գրում է, որ յոյները յարքունիս են գրաւում յունահպատակ Թիւրքերի կալուածքները։ Լրագիրը պահանջում է կառավարութիւնից վարվել նոյն կերպ Թիւրքիաբնակ յոյների վերաբերութեամբ։

ՊՐԺԷՄԸՇԼ

Ռուսական բանակը մօտեցել է արդէն աւստրիական առաջնակարգ բերդերից մէկին, Պրժէմըշլին, որի առումով բացվում է անարգել ճանապարհ դէպի Կրակով։

Պրժէմըշլը Գալիցիական Ռուսիայի հնագոյն քաղաքներից մէկն է. նրա գոյութիւնը յայտնի է դեռ Օլէգի օրերից և կոչվում էր Պերէմըշլ։ Օլէգը, պատմութեան ասելով, իր գնդերով պաշարեց նրան ու ապա հաշտութիւն կապելով տալէճների, խօրվաթների ու բուժանների հետ՝ միացեալ ույժերով արշաւեց Ցարգրադի վրա։

Այնուհետև յաջորդաբար Պրժէմըշլը ձեռքից ձեռք է անցնում. ռուսներից խլում են լեհերը, լեհերից՝ Գալիցիայի իշխանները, ապա ամբողջ երեք հարիւր տարի տիրում են ռուսները, մինչև իսկ մօնղոլները։ Բայց 1349 թւին լեհերը նորից են տիրում նրան։

Այնուհետև էլ այդ քաղաքին տիրանալու մրցումը շարունակվում է, մինչև որ վերջնականապէս բաժան-բաժան է լինում Լեհաստանը և այդ քաղաքն էլ մտնում է Աւստրո-Ունգարիայի կայսրութեան մէջ։

Ներկայումս Պրժէմըշլը գաւառական մի քաղաք է 46,000 ազգաբնակութեամբ, որի մեծ մասը կազմում են լեհերն ու հրէաները, կան և մեծ թւով մալօռուսներ։

Այստեղ է նստում կաթօլիկների և ունիօնիստների եպիսկոպոսը։ Քաղաքը ունի երկու կլասիքական գիմնազիա՝ լեհական և մալօռուսական, մի ուսուցչական սեմինարիա, թատրոն, և լոյս են տեսնում մի քանի լրագիրներ։

Պրժէմըշլը յայտնի է որպէս առևտրական քաղաք. գտնվելով Սան գետի ափին նա ամֆիթէատրոնի ձևով բարձրանում է դէպի սարը, որի կատարից դիտում է դէպի քաղաքն ու շրջակայքը արքայական ամրոցը։

Սակայն Պրժէմըշլի արժէքը կայանում է նրանում, որ նա առաջնակարգ բերդերից մէկն է ու իր դիրքով ներկայ օրերին փակում է դէպի Կարպատները տանող բոլոր ուղիները և ապահովում Սան գետի աջ ափին դիրքեր բռնած աւստրիական պաշտպանողական աջ թևը։

Բերդի մարտկոցների արտաքին գօտին բաղկացած է 42 ամրութիւններից, որոնց թւում 16-ը նոր տիպի են և ընկած են գետի երկու ափերին։

Ներքին գօտին օղակվում է 8 ամրութիւններով։

Բերդի բոլոր մասերը իրար հետ միանում են խճուղիների ու երկաթուղագծերի ցանցերով, որոնք բռնում են մօտ 100 մղոն տարածութիւն։

Աւստրիական կառավարութիւնը Պրժէմըշլը ամրացնելու ու ռազմական նպատակների ծառայեցնելու համար ծախսել է 100 միլիոն րուբլի։

Ռուսական զօրքերի բոլոր ջանքերը վերջին օրերս ահա ուղղված են աւստրիական այդ առաջնակարգ բերդի առմանը. նրա ամրութիւններից մի քանիսը արդէն գրաւված են և յոյս կայ, որ շուտով հեռագիրը կաւետէ նաև Պրժէմըշլը առնելու լուրը։

Պրժէմըշլը վերցնելով բացվում է դէպի Կրակով տանող ուղին և խզվում է Գալիցիայի հաղորդակցութիւնը Ունգարիայի հետ։

ՐԷՅՄՍԻ ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Րէյմսի տաճարի կործանման առիթով ֆրանսիացի գրող Պօլ Բուրժէն հետևեալն է գրում Պարիզից «Рус. Вѣд.»-ին։

«Րէյմսի տաճարի կործանումը Պարիզում այնքան խոր և ծանր տպաւորութիւն թողեց, որ ես թոյլ եմ տալիս ինձ նորից ձեր ուշադրութիւնը հրաւիրել վանդալականութեան այս անօրինակ արարքի վրա։

«Ֆրանսիական տաճարներից և ոչ մէկը իր եսև չէ ունեցել այնքան փառաւոր, այնքան յարգելի անցեալ, որպէս Րէյմսինը. ոչ մի տաճարում չէ եղել այնքան շատ գեղեցիկ արձաններ։ Տաճարի գմբէթը, պատերը և կամարը զարդարող բազմաթիւ անդրիները և նկարները, XIII դարի ճաշակով շինված գեղեցիկ լուսամուտները, այս ամենը իրանց նմանը չեն ունեցել։ Վերջին երեսուն տարին տաճարը խոր մտածված և գեղեցիկ վերաշինութեան ասպարէզ դարձաւ. այդ աշխատանքները պէտք է վերջանային եկող տարի և աշխարհը նորից պէտք է տեսնէր նշանաւոր բասիլիկան (հին նոյակապ տաճարը) նրա պարզ շքեղութեան և մաքրութեան մէջ։ Այժմ ճարտարապետական այդ հրաշալիքը, իրանից ներկայացնում է մի կմախք, կմախք այրված և սևացած պատերի։

«Տաճարը, որ քար ու քանդ արվեց առանց պատերազմական որևէ նպատակի, կանգնած է քաղաքի մէջ տեղը, հեռու ամեն տեսակ զօրանոցներից և պահեստներից։ Գերմանացիները նախազգուշացվեցին Ֆրանսիական պարլամենտէօրների կողմից, որ տաճարը իր մէջ ապաստան է տուել գերմանացի 200 վիրաւորների։ Ոչինչ չը կանգնեցրին բարբարոսներին, որոնք կործանեցին տաճարը կործանման կրքով տարված, սառը գիտակցութեամբ և կոյր վայրոյթով, առանց որևէ պատճառի, բացի Մառնի վրա կրած պարտութեան համար վրէժխնդիր լինելու ցանկութիւնից։

«Րէյմսի քաղաքագլխի անունով ստացված ցաւակցական հեռագրում, Պարիզի քաղաքային խորհուրդը զարմանք է յայտնում, թէ ինչպէս աշխարհում գտնվեց մի մարդ, որը նման հրաման արձակեց։ Ֆրանսիական կառավարութիւնը որոշել է անմիջապէս դիւանագիտական ճանապարհով յայտնել պետութիւններին իր բողոքը և վայրոյթը վանդալականութեան այդ կոպիտ գործողութեան դէմ։ Այդ վանդալականութիւնը առաւել նրանով է ամօթալի, որ իրանք գերմանացիները վաղօրօք կնքեցին։ «Frank. Zeit.»-ը սեպտեմբերի 8-ի №-ում գրում է. «Յարգենք ֆրանսիական տաճարները, մանաւանդ Րէյմսի տաճարը, որը հին նոյակապ տաճարներից մէկն է»... Րէյմսի տաճարը Ֆրանսիային չէ պատկանում, այլ ողջ մարդկութեան։ Եւ այժմ ամբողջ մարդկութեանը բողոք է բառնում Հիւգօյի, Միշլէի, Րօդէնի Ֆրանսիան գերմանացիների ոճրագործութեան մասին։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պատերազմ, պատրիոտիզմ և գիտութիւն)

I

Արտասահմանեան թերթերը հաղորդեցին Լայպցիգի համալսարանի պատմագիտութեան պրոֆեսոր Կարլ Լամպրեխտի՝ պատերազմի մասին կարդացած դասախօսութեան համառօտ բովանդակութիւնը։

Պրոֆ. Լամպրեխտը համարվում էր մինչ այժմ գերման պատմաբանների մէջ ամենանշանաւոր դէմքերից մէկը, որքան յայտնի է նա մեզ իր գրուածքներից և անմիջական համալսարանական դասախօսութիւններից։ Պատմական երևոյթների զարգացման պրոցեսի մեկնաբանութեան մէջ նա կօլեկտիվիստ է, հակառակ ինդիվիդուալիզմի։ Իսկ իր քաղաքական հայեացքների մէջ՝ մինչև դեմօկրատիզմի սահմանները շօշափող վճռական լիբերալ է։ Յաճախ ենք լսել մենք նրա աւդիտօրիայում ջատագովական խօսքեր անգլիական պարլամենտարիզմի և ֆրանսիական դեմօկրատիզմի հասցէին։ «Այդ երկիրներում իրականացած քաղաքական և քաղաքացիական ազատութիւնների սկզբունքները դեռ իդէալ են գերմանացիներիս համար, որին պիտի ձգտենք և իրականացնենք»։

Այսպիսի խօսքեր արտասանելու քաջութիւն ունեցող շատ քիչ դոցենտներ կան գերմանական համալսարաններում։ Իսկ արտասանողին ծափահարում է լսարանի հազիւ մի երրորդ մասը, այն էլ գրեթէ ամբողջապէս օտարերկրացի ուսանողներ։

Իբրև ժամանակակից յայտնի գիտնական դէմքերից մէկը, բնական է, որ արտասահմանեան և ռուսական մամուլը արձանագրեց նրա դասախօսութեան բնորոշ կէտերը։

Սակայն մենք չենք կարող ներկայ դէպքում առանց քննական վերաբերմունքի անցնել գերմանական պրոֆեսորի ուղղակի առաջակից մոլորութիւնների վրայից, ինչպիսին նա ցոյց է տալիս իր վերջին դասախօսութեան մէջ պատերազմի մասին։ Գիտակցելով փաստական պատասխանատուութեան պարտականութիւնը, յայտարարում ենք առանց այլ և այլի, որ մեր վաղեմի ուսուցչապետը իր հրապարակական մտքերով բաւական տխուր ապացոյցն է տուել այն բանի, թէ ինչպէս համալսարանական ամբիոնի լուրջ գիտնականը կարող է երբեմն անվերապահ տարվել թշուառ Միխելի խեղկատակ պատրիոտիզմով. թէ ինչպէս գիտութիւնը և գիտութեան մարդը կարող են—ուռա—սոտրաքարոզ աղախնի հնազանդութեամբ գլուխ խոնարհել եղկելի Pöbel-ի (ամբոխի) պատրիոտական ոգևորութեան ցաւագար բռնկումների առաջ։

Թող ուշադրութեամբ հետևէ մեզ ընթերցողը և համոզվէ տուածս որակումների փաստական ճշդութեան մէջ։

Որոնք են պրոֆ. Կ. Լամպրեխտի արծարծած հիմնական մտքերը։

Ներկայ պատերազմի մէջ առանձնապէս արտայայտվող առաջ-մղիչ ույժը կազմում է, Լամպրեխտի կարծիքով, ռասայի և պետական ինստինկտների ազգակցութիւնը։ Գերմանական պետականութեան շուրջը խմբվել են բոլոր գերմանական ժողովուրդները, որոնք և պաշտպանում են գերմանիզմի գաղծը. դրանք են՝ Շվէյցիան, Հոլլանդիան, Դանիան, Նորվէգիան և Շուէդիան։ Միայն գերմանական մի ցեղ է զատվել գերմանական գաղափարից և դրա համար զղջում է նա (խօսքը վերաբերում է Անգլիային)։ Անգլիայի և Ֆրանսիայի դաշն բացատրվում է, ըստ Լամպրեխտի, նրանով, որ Անգլիայում գերմանական ոգին ճնշվել է կելտական ոգուց։ Ֆրանսիան մնում է կղզիացած լատինական աշխարհում, որովհետև Սպանիայի և Պորտուգալիայի կողմնակցութիւնը միայն Անգլիայի ճնշումով է պայմանաւորված։ Իսկ Իտալիան կանգնած չէ Ֆրանսիայի կողմը։ Սլաւօնական տարրերը Աւստրիայում թշնամաբար են տրամադրված դէպի ռուսական գաղափարը, որովհետև նրանք գտնվում են արևմտեան քաղաքակրթութեան ազդեցութեան տակ։ Արդի պատերազմը կազմում է վերջին բախումը մի կողմից գերմանիզմի և արևմտեան սլաւիզմի, միւս կողմից «արևելեան բարբարոսութեան» միջև։

Այս է գերմանական պրոֆեսորի պատմագիտական ըմբռնումների դօկումենտը համաեւրոպական պատերազմի մասին։ Ես ուզում եմ լաւատես լինել և հաւատալ, որ եթէ Կարլ Լամպրեխտը իր «Die deutsche Geschichte» («Գերմանական պատմութիւնը») բազմահատոր նշանաւոր աշխատութեան յետագայ հատորներից մէկը նուիրէ գերմանական պետութեան և ընդհանրապէս եւրոպական ազգերի արդի պատմական էջերին, ուրիշ ակնոցով պիտի դիտէ ահագնասոսկ վերիվայրումի պատկերը մեր ժամանակակից օրերի։ Բայց քանի որ նա տալիս է մեզ այժմ շատ բնորոշ բացատրութիւններ, չենք կարող լռել և կախվել սոսկ ենթադրական լաւատեսութեան փեշերից։

Մեզ վրա պարտք է ծանրանում ոչ միայն ապացուցել պրոֆ. Լամպրեխտի պատմահայեցողական թիւր ըմբռնումները ներկայ պատերազմի վերաբերեալ, այլև ցոյց տալ նրա բացարձակ կեղծիքները, իրողութեան անվայել խեղաթիւրումները։

Սկսենք վերջինից։

B. Lucifer

ՀԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ներկայ պատերազմը մեծ պարտականութիւն է դնում հայի առաջ, հայութեան մի նշանաւոր հատուածի—ռուսահայերի քաղաքացիական հասունութեան առաջ։

Մենք պէտք է ցոյց տանք, որ հայն էլ գիտէ անհաշտ կուսակցական, անջատական տարբեր պայքարներով միանալու քաղաքակրթական արդար պահանջին, խոնարհվելու մշտական ու յարատև խաղաղութեան դատին, որ նա էլ տոգորված է ընդհանուր, անզուսպ զայրոյթով «ույժը արդարութիւնից գերադասող» կայզերների դէմ։

Որ նա էլ է պատրաստ լուրջ գործի առաջ մեծ զոհաբերութեան։

Թէ նա էլ գիտէ զոհը զոհից տարբերել, պատերազմը պատերազմից որոշել, յարատև արիւնահեղութիւնից միանուագ սոսկալին նախապատուել։

Թէև ահելի ու անօրինակ լինի սկսված ներկայ պատերազմը, թէկուզ նմանը տեսած էլ չը լինի երբէք աշխարհը, բայց քանի որ տեւտօնական սպառազինութիւն կայ սպառնացող, քանի որ արեան ծարաւ մերկ սրին է նա պաշտում, և այդ արիւնասանձ կուռքի մեհեանն ու պաշտօնեաները չեն ջախջախված, չեն չքացած, թող տեսնեն, որ նրանց կործանելու և ջնջելու գաղափարական վեհ գործում հայն էլ է հոգով յօժար ու պատրաստ թանկագին կեանքերից մինչև նիւթական մեծ զոհաբերութիւնը։

Երիտասարդը իր զէնքով ու կեանքով, օրիորդը իր կար ու ասեղով, տանտիկինը սովորական ծախսերի կրճատմամբ, ծառայողն ու վաճառականը իր ռոճիկի և աշխատանքի որոշ պրոցենտով, գիւղացին յարդով, գարիով և ունեցած պտղի բաժիններով, չքաւորը իր անձնական մասնակցութեամբ և ունևորը իր մի քանի օրվայ արդիւնքով ոչ մի ջանք չը պիտի խնայեն թեթևացնելու պատերազմող, վիրաւոր որդիների, եղբայրների և հայրերի կարիքներն ու ցաւերը։

Թող տեսնի կարմիր տեւտօնը և համոզվի, որ մեր ընդհանուր հայրենիքի ցանկութիւնը և կամքը հայն էլ գիտէ բարձր գնահատել, որ նրան հասցրած վիրաւորանքին ի պատասխան հայն էլ գիտէ միանալ ընդհանուր ապտակին, որ մեծ մօր՝ Վոլգայի ուրախութիւնը, վիշտն ու ցասումը—փոքրիկ և մայր Արաքսի ուրախութիւնն է, վիշտն ու ցասումը. որ մեծ Վոլգայի նպատակով փոքրիկ Արաքսի ընթացքն էլ միշտ միևնոյն ծովը պիտի լինի ուղղված, միայն այն տարբերութեամբ, որ Արաքսի ջուրը, արտասուքով խառնված, աւելի յուզված ու վրդոված, փրփրակէզ ալիքներով պիտի ծփայ և ընթանայ դէպի ծով, մինչև տեւտօնների փայփայած գիշատիչ համիդիականների աւերածութեան և սիրած դիակներին վերջ չը դրվեն, մինչև դարերով իրաւազուրկ, խաղաղութեան կարօտը սրտում, շարունակ յօշոտվող ժողովրդին, նրա ափերում տառապող բնակիչներին օգնութեան ազատարար ձայնը չը հասնի հիւսիսից։ Հայութեան երջանիկ հատուածը, որ տառապալից եղբայրների հետ սուրբ տաճարներում «բարեպաշտ թագաւորաց հաստատութիւն և աշխարհիս խաղաղութիւն է» աղերսում, պէտք է իր կողմից ևս ոչ մի զոհի առաջ կանգ չի առնի։

Իսրայել

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ

Ստացանք բժշկ. Յ. Գասպարեանից 15 րուբ.։ Նախորդ ստացվածների (տես «Մշակ» № 192) հետ միասին ունենք ստացած ընդամենը 28 րուբլի։

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, սեպտ. 14-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ Կ. Հ. Բ. Ընկ. համագումարը, մասնակցութեամբ Ընկ. գաւառական ճիւղերի և հայկական զանազան հասարակական հաստատութիւնների, հիմնարկութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչների, Կովկասի փոխարքայի թոյլտւութեամբ։

Նախ քան ժողովը, երեկ. ժամը 8-ին Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը կատարեց հանդիսաւոր մաղթանք՝ ռուսաց զէնքի յաղթութեան և յետոյ հոգեհանգիստ՝ պատերազմում ընկածների համար մօտ 15 քահանայի սպասաւորութեամբ և Ընկ. վերին դահլիճը լցրած երկսեռ հոծ բազմութեան ներկայութեամբ։

Այնուհետև, բանալով պատգամաւորական ժողովը, Ընկ. խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեան դիմեց նրան մի ճառով, որի մէջ ասաց, թէ մարդկութեան անդորր կուլտուրական ու ստեղծագործական կեանքը երկու ամիս առաջ անակնկալ խախտեց միլիտարիստ Գերմանիան, որ ձգտում է իր հեգէմոնիան տարածել ամբողջ Եւրոպայի վրա։ Ու թափվեց անմեղ ու անթիւ զոհերի արիւնը... Յանուն բռնաբարված իրաւունքի ու արդարութեան հանդէս եկաւ երրեակ համաձայնութիւնը, որին աջակից եղան Սերբիա, Բէլգիա և Չերնոգորիա մանր պետութիւնները, ու քաղաքակիրթ ողջ աշխարհի բուռն համակրութիւնը այդ վեհանձն պետութիւնների կողմն է։ Հայ հասարակութիւնը մասնաւորապէս կրկնակի աջակցութիւն ու համակրութիւն պէտք է ցոյց տայ դէպի մարդկութեան ոտնահարված իրաւունքների վերականգնման համար կռւող պետութիւնները, մանաւանդ դէպի Ռուսաստանը, որ ներկայանում է հայութեան վաղեմի պաշտպանը։ Հասկանալի է, որ այդ աջակցութիւնը կազմակերպվելու է մեծ ծաւալի մէջ։ Եւ այդ մասին խորհրդակցելու նպատակն է, որ դրդել է գումարել ներկայ ժողովը, որ պէտք է խորհրդակցէ, թէ ինչ ձևով և ձեռնարկութիւններով պէտք է մասնակցէ վիրաւոր զինւորներին օգնելու և պահեստների ընտանիքներին խնամելու մեծ գործում, ի նկատի ունենալով մօտիկ Արևելքում բարդութիւններ առաջ գալու հնարաւորութիւնը։

Ապա Յարութիւնեան խնդրեց ժողովի նախագահ համարել Մեսրոպ սրբազանին, ատենապետ՝ Պետ. Դումայի անդամ Միք. Պապաջանեանին, իսկ քարտուղար՝ Ստ. Կանայեանին։ Ժողովը տալիս է իր հաւանութիւնը։

Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը արտասանում է մի ճառ ներկայ պատմական լուրջ րոպէի մասին, որի նկատմամբ հայ բազմաչարչար ժողովուրդը ևս իր միացեալ զգացմունքներով պէտք է շօշափելի աջակցութիւնը ցոյց տայ Անգլիային, Ֆրանսիային և Ռուսաստանին, որոնք կռւում են սուրբ գործի համար։

Ատենապետը, շնորհակալութիւն յայտնելով իրան ցոյց տրված պատւի համար՝ շեշտում է ժողովրդի ույժերի նշանակութիւնը, մատնանշում է, որ հայերը ևս, սլաւօնների նման, պէտք է իրանց ներքին միակ խնդիրը դարձնեն այն, թէ ինչպէս անել, որ ռուսաց զէնքը յաղթէ։

Դրանից յետոյ Ընկ. խորհրդի քարտուղարը կարդում է հրաւիրվածների ցուցակը, իսկ յետոյ Ընկ. զեկուցումը, որ բաժանվում է երեք կէտի. 1) բանալ մի հիւանդանոց 200 մահճակալով, 2) սանիտարական խմբեր ուղարկել պատերազմի դաշտը և 3) կազմակերպել օգնութիւն պահեստների ընտանիքներին։ Խնդրի գլխաւոր կողմը կայանում է այդ ամեն գործունէութեան մէջ մի շաղկապ, մի միութիւն մտցնելու անհրաժեշտութիւնը ներկայ դէպքում։

Բուն էութեան խօսելուց առաջ, Հ. Տէր-Միքայէլեան, Պարսեան, Բաշինջաղեան, Պապաջանեան, Մ. Բերբէրեան, Ալիբէկեան տալիս են տեղեկութիւններ այն մասին, որ Բագւում, Նոր-Նախիջևանում, Ռոստովում, Պետրօգրադում և Մոսկվայում արդէն հայ հաստատութիւնների և անձերի կողմից հիմնվել են հիւանդանոցներ վիրաւորների համար և հանգանակվել են գումարներ պահեստների ընտանիքների օգտին, ինչպէս նաև հաստատվել են տեղական մասնաժողովներ։ Այսպէս՝ օրինակ՝ Կուլտ. Միութիւնը բացել է հիւանդանոց 200 մահճակալով և հանգանակել է 15,000 ր., Մարդասէր. Ընկ. 100 մահճակալով, Նոր-Նախիջևանի հայերը անկելանոցը յարմարեցրել են հիւանդանոցի

75 մահճակալով, Պետրոգրադի հայութիւնը, 50 մահճ., Մոսկվայի հայերը՝ 200 մահճակալ, Պեատիգորսկի հայերը՝ 20 մահճակալ, Լ. և Ց. Մանթաշեանները հիմնել են հիւանդանոցներ 120 և 100 մահճակալներով և այլն և այլն։ Սրբազանի ասելով, տ. Իզաբաշեանը անձամբ մեկնել է պատերազմի դաշտը սանիտարական սեփական խմբով։

Լէօն նկատում է, որ՝ ներկայ խոշոր քաղաքական դրութիւնը նկատի առած՝ Բ. Ընկ. խորհրդի առաջարկութիւնը — բանալ 200 մահճակալով հիւանդանոց իր բաժանմունքներով—շատ չնչին է, որ կարելի լինի ասել թէ հայութիւնը կատարեց մի շօշափելի, իրան համապատասխան մի գործ։ Ամենից առաջ Լէօն կողմնակից է, որ որոշվի պարզօրէն օգնութեան չափը, որ պէտք է հայ ազգը տայ այժմ, և յետոյ՝ ինչ միջոցներով։ Կարեւոր է որոշակի պարզել կազմակերպութեան սիստեմը։

Ցարութիւնեան բացատրում է խորհրդի առաջարկութիւնը։

Շիրվանզադէն գտնում է, որ օգնութիւնը պէտք է կրէ «հայկական» անունը, իսկ տեղական հայերի ձեռնարկութիւնները ենթարկվելու են այդ ընդհանուր տէրմինին։

Հ. Առաքելեան ընդգծում է սանիտարական խմբեր կազմակերպելու կարեւորութիւնը, որ պէտք է դնել քննութեան առաջին հերթում։

Հ. Մուշեղեան մատնանշում է, որ աւելի հերթականը պահեստիների ընտանիքներին օգնութիւն հասցնելու հարցն է։

Չենք կարող չը նկատել, որ հարցը բաւական առաձգական բնոյթ ստացաւ։ Խօսեցին նոյնպէս Բերբերեան, Տէր-Միրաքեան, Խարազեան, Աւ. Սահակեան, բժ. Թադէոսեան, Ստ. Լիսիցեան, Մ. Զմշկեան, Ս. Թառայեան, Լիսիցեան (որդին), գաւ. պատգամաւոր Տէր-Գէորգեան, ըստ որում շատերը քննադատում են խորհրդի առաջարկութեան անորոշութիւնը, ոմանք կարծիքներ են յայտնում տեղական մասնաժողովների աւտոնոմ գործունէութեան մասին և այլն։

Ատենապետը ընդգծում է, որ կարեւորը այն միութեան գաղափարն է, որ անհրաժեշտ է ներկայ խնդրում։ Օրինակ է բերում համառուսական զեմստվային և քաղաքային միութիւնների գործունէութիւնը։ Պէտք է ցանկութիւն յայտնել, որպէսզի միանան բոլոր հայ համայնքները, հասարակութիւնները պատերազմի առիթով իրանց ձեռնարկած գործողութիւնների վերաբերութեամբ, ընդունելով կենտրոն Թիֆլիսը։

Լէօն դարձեալ ասում է, որ եթէ մեծ գործ անհնար է անել, ուրեմն չը պէտք է չահագործել հայութեան անունը։

Ս. Ցարութիւնեան նոր ձեւակերպութիւն է տալիս հարցին, ասելով որ ժողովը միայն սկզբունքային տեսակէտից պէտք է մօտենայ Բ. Ընկ. խորհրդի առաջարկած երեք հարցերին։ Հիմնական խնդիրը գաղափարն է։ Պէտք է ընդունել միութեան այդ գաղափարը։ Աւելորդ է նախորոշել օգնութեան չափը, որի վրայ շեշտում է Լէօն։ Համայնքները իրանք կընդլայնեն հայի օգնութեան միջոցները։

Ի վերջոյ ժողովը համաձայնում է ատենապետի ձեւակերպութեան հետ՝ թէ հիմնել մի հայկական հիւանդանոց, Թիֆլիսում, և տեղական հայաբնակ վայրերի բացած և նոր բաւելիք հիւանդանոցները վիրաւոր զինւորների համար համարել նրա ճիւղերը։

Երկրորդ խնդրից յետոյ—սանիտարական խմբերի կազմակերպութեան մասին—քննըվում է պահեստիների ընտանիքներին օգնելու հարցը։

Ինժ. Ալիբէգեան յայտնում է, որ Բագուի Կուլտ. Միութիւնը օգնութիւն է կազմակերպում գլխաւորապէս հայկական գիւղերում, ի նկատի ունենալով որ քաղաքում գործում են հասարակական և պետական մարմիններ։ Սակայն Թիֆլիսում անհրաժեշտ է հիմնել ղեկավար կենտրոնական բիւրօ՝ այդ տեսակ օգնութիւնը ընդարձակելու համար։

Ա. Սահակեան, Մ. Ղազարեան, Խարազեան ընդգծում են, որ անհրաժեշտ է բացի դրամական օգնութիւնից տալ գիւղական ազգաբնակութեանը նաև գիւղատնտեսական օգնութիւն երկրագործութեան գործիքներով, աշխատանք կազմակերպելով և այլն։

Մաքերի փոխանակութիւնից յետոյ ընդունվում է՝ առաջարկել կազմակերպել ըստ հնարաւորութեան լայն կերպով օգնութիւն պահեստի զինւորների ընտանիքներին, նըկատի առնելով և գիւղատնտեսական օգնութեան ձեւը։

Միջոցների հարցի նկատմամբ ժողովը համարեա առանց առարկութեան համաձայնում է խորհրդի առաջարկած եղանակների հետ, ինչպիսին է՝ կամաւոր ու միանուագ նուէրներ, «լումա» կոչված նուէր ամեն մի ընտանիքից ամսի ընթացքում մի օրվայ ծախսը յատկացնելով, քաղաքների և [illegible] անունով պահվող անդամավճարներ, վիճակախաղ շահող տոմսերով, նուէրներ մթերքներով ու իրերով և դասախօսութիւնների միջոցով հասոյթներ։

Ժողովը ընդունում է, որ ապագայ ընտրեալ մարմինը կարող է իր հայեցողութեամբ մատնանշել ամեն տեսակ ցանկալի և հնարաւոր միջոցներ։

10 րոպէի չափ ընդմիջումից յետոյ, Բ. Ընկ. նախագահը բացատրում է կազմակերպութեան առիթով, որ խորհուրդը առաջարկում է ընտրել մի կենտրոնական մարմին 24 հոգուց բաղկացած. դրանից 12-ին ընտրում են Թիֆլիսի հայկական հաստատութիւնները, իսկ 12-ին՝ Բագուի հայկական հաստատութիւնները։ Բացի այդ՝ կենտրոնական մարմնի անդամներ համարվելու են տեղական վայրերում գոյութիւն ունեցող այն մասնաժողովների նախագահները—անկախ այն հարցից, թէ դրանք կարող են Կ. Հ. Բ. Ընկ. ճիւղերը լինել կամ առանձին անհատներից բաղկացած—որոնք զբաղվում են ներկայ գործով, այսինքն հիւանդանոցներ բանալու և պահեստիների ընտանիքներին խնամելու հարցով։ Կենտրոնական մարմինը, հարկաւ, մշակելու է մի ծրագիր ընդհանուր գործունէութիւնը ղեկավարելու համար։

Հուսկ յետոյ սրբազան-նախագահն առաջարկեց յանձնարարել ներկայ ժողովի, Կ. Հ. Բ. Ընկ., Բագուի Մարդասիր. Ընկ. և Կուլտ. Միութեան նախագահներին՝ ներկայանալ Կովկասի փոխարքային և խնդրել առ ոտս Թագաւոր Կայսրի արկանել ժողովի ամենահաւատարիմ զգացմունքների արտայայտութիւնը, նաև հեռագիր ուղարկել Գերագոյն Զօրահրամանատար Մեծ Իշխանին, ցանկանալով յաղթութիւն ռուսաց քաջարի զօրքին, և շնորհակալութիւն յայտնել փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվին՝ իր ցոյց տուած մշտական բարեացակամ վերաբերմունքի համար։

Ատենապետ Պապաջանեան առաջարկում է ուղարկել հեռագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսին, խնդրելով Վեհափառի օրհնութիւնը և հովանին ծրագրված գործունէութեան առիթով։

Սրբազանը յայտնում է, որ ինքն իր ժամանակին այդ առիթով զեկուցել է Վեհափառին, որ միշտ հայրական վերաբերմունք է ցոյց տուել դէպի նման ձեռնարկութիւնները։

Փոխադարձ շնորհակալութիւններից յետոյ, փակվեց ժողովը գիշ. ժամը 12-ին։

Եա.

ԲԵԹՂԵՀԷՄ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» ընթերցողները գիտեն, որ Բեթղեհէմ եկեղեցին ունէր մի ծխական հոգաբարձութիւն, որ գործում էր բոլորովին թայֆայական ոգով, որով յարուցել էր ծխական ժողովրդի արդար զայրոյթը և դժգոհութիւնը։ Ամսիս 14-ին, կիրակի, կայացաւ նոր հոգաբարձութեան ընտրութիւն։

Ծխականները, տապալելով թայֆայական հոգաբարձութիւնը, ընտրեցին նոր հոգաբարձութիւն, բաղկացած ամբողջովին հակա-թայֆայականներից։ Ընտրվեցին Աբուլեան և Մեհրաբեան քահանաները, Ցովհ. Խուդադեան (դիրեկտոր վաճառ. բանկի) և ինժեներ Զուրաբեան։ Այս չորսը երէցփոխ պ. Բ. Աւանեանի հետ կազմում են ծխական հոգաբարձութիւն։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գիւղի տնտեսութիւնից

Շնող գիւղ, 9 սեպտեմբերի

Այգիների բերքը այս տարի շատ քիչ բան է խոստանում։ Խաղողը չը լինելու չափ սակաւ է, առատ է դեղձը, բայց որովհետև ապրանքատար գնացքներով հնար չը կար ժամանակին արտահանելու, ուստի տեղն ու տեղը մնալով փտում է ու առանց օգուտի կորչում։

Մնում է ցորենը, որի բերքը սպասածից պակաս եղաւ այս տարի։ Հացի գինը այժմեանից սկսում է բարձրանալ, սակայն առաջին ձեռքերից նա էժան գնով, դեռ կալերից դուրս է գալիս, ապա խոշոր ձեռքերին հասնելուց յետոյ միայն թանգանում։

Աշնանավարի ժամանակը արդէն եկել է, դժուար է լինելու այն ընտանիքների դրութիւնը, որոնք զրկվել են աշխատող ույժերից։ Այսպիսի դէպքերում ընդունված է հողերը «կիսու վարելը», բայց դա շատ քիչ օգուտ կը բերէ տէրերին, ուստի լաւ կը լինի, եթէ յիշածս ընտանիքների հողերը վարվեն ոչ թէ «կիսու», այլ համայնական ույժով, ի նկատի առնելով այժմեան բացառիկ դրութիւնը։

Բ. Մկրտումեան

Չը տեսնված թանգութիւն

Կարս, 8 սեպտեմբերի

Մեր քաղաքը ներկայումս առանձին կենդանութիւն է ստացել։

Ամբողջ օրը խանութները լիքն են, և քաղաքի առեւտրական կեանքը եռում է։ Առեւտրականները աշխատանքի տենչով բռնված ապրանքների գները մէկը-երկուսով աւելացրել են և լցնում են իրանց գրպանները։

Հացի II տեսակի փութը ծախվում է 5 կ. և այն էլ կուով է ձեռք բերվում, III տեսակի հացը՝ կատարելապէս սեւ, կիսախմոր՝ 4—4½ կ., խաղողի փութը 8—10 կ., մի ձմերուկը՝ 40—60 կ., նոյնիսկ ծխախոտների գների մէջ էլ 1—2 կ. աւելացրել են...

Վ. Թ.

Անհաւատալի թանգութիւն

Խանքենդ, 4 սեպտ.

Պատերազմը յայտարարվելուն պէս, ինչպէս ուրիշ տեղեր, այնպէս և Ղարաբաղի շրջանում կենսական մթերքների գները զարմանալիօրէն բարձրացան։ Ընչաքաղց խանութպանները հաւանօրէն առանձնակի կերպով կը նեղէին ժողովրդին, եթէ չը լինէին ոստիկանութեան ձեռք առած կտրուկ միջոցները, որպիսի հանգամանքը ինչպէս օգտակար ազդեցութիւն ունեցաւ առանց այն էլ նիւթականապէս քայքայված ժողովրդի տնտեսութեան վրայ։

Բայց դժբաղդաբար մեր ժողովուրդը այնքան թոյլ է և կամազուրկ, որ նոյնիսկ կառավարութեան սահմանած սակագնից աւել վճարելով է մթերքներ գնում՝ «խանութպանի խաթրին չը կպչելու»։

Խանութպանների կեղեքման են ենթարկվում առաւելապէս գիւղացիները, մանաւանդ որ գիւղերում ոստիկանական պաշտօնեայ չը կայ, որ արգելէ. գիւղի քեօխվան էլ «ժամանակ չունի» այդպիսի գործերով զբաղվելու։

Ուրեմն գիւղերում գիտակից անհատների պարտքն է՝ յատուկ յանձնախմբեր ընտրել խանութպանների վրա հսկելու համար։

Ա. Ասլանեան

Ստաւրոպոլի համբաւաբեր

Ստաւրոպոլ, 7 սեպտ.

Օգոստոսի 3-ին տեղիս հայոց եկեղեցում տեղի ունեցաւ Կայսերական մաղթանք Կայսերական Տան արեշատութեան և ռուս զօրքի աջողութեան համար, որից յետոյ Ս. քահանայ Տէր-Ցովհաննիսեանը և երէցփոխ Իսահակ Մանուչարեանը ներկայացան նահանգապետին և, յայտնելով տեղի ունեցած մաղթանքի մասին, խնդրեցին նահանգապետին տեղիս հայերի ամենահպատակ զգացմունքները արկանել առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան։ Օրերս նահանգապետի միջոցով ստացվեց Սահակ քահանայի անունով Թագաւոր Կայսեր շնորհակալութիւնը Ստաւրոպոլի հայերի յայտնած ամենահպատակ զգացմունքների առիթով։

Տեղիս հայերն էլ անմասն չը մնացին պատերազմում վիրաւորված զինւորներին օգնելու գործում։ Օգոստոսի սկիզբները տեղիս ծխատէր Ս. ք. Տէր-Ցովհաննիսեանի հրաւիրանօք տեղի ունեցաւ բազմամարդ ժողով, ուր որոշվեց տեղիս հայերի կողմից պատրաստել 20 մահճակալ վիրաւորների համար։ Մի քանի օրում բաւական խոշոր գումար հանգանակվեց։ Միզունների ժրաջանութեամբ տեղիս հայուհիները դպրոցի դահլիճում և տներում պատրաստում էին հարկաւոր իրերը ձեւելով ու կարելով։

Հանգանակված գումարով կարելի եղաւ 20 մահճակալի փոխարէն 45-ը պատրաստել և հաւանական է 50-ի հասնի, որի կէսը տրվեց տեղիս Ալէքսանդրեան դպրոցին, իսկ կէսը «Բարակ» կոչված հիւանդանոցին, զեմստվայի հովանաւորութեան ներքոյ։ Հայերի պատրաստած մահճակալները իրանց շքեղութեամբ ու պարագաների բազմազանութեամբ գերազանցում են այլ հաստատութիւնների ու համայնքների պատրաստածներից։

Դպրոցի ուսուցիչ Ս. Տէր-Աբրահամեանի զինւորական ծառայութեան կանչվելու պատճառով, հոգաբարձութիւնը որոշեց առայժմ նոր ուսուցիչ չը հրաւիրել, այլ միաժամանակ դասերը բաժանել ուսուցչական խմբի մէջ, վճարելով Ս. Տէր-Աբրահամեանի ռոճիկի կէսը։

Թող այս օրինակը ի նկատի ունենան այլ ծխական դպրոցների հոգաբարձութիւնները և պահեստի կանչված ուսուցիչների ընտանիքները անորոշ դրութեան մէջ չը ձգեն։

Կիրակի, օգոստոսի 31-ին տեղս բերին 1100 հոգի աւստրիացի գերիներ, որոնցից մեծամասնութիւնը վիրաւորված է ձեռքերից և ոտներից։

Ժողովուրդը շատ կարեկցաբար ընդունեց վիրաւորվածներին և ամեն ոք աշխատում էր իր նուէրով մասամբ մոռացնել տալ գերութիւնը։ Գերիները զարմացել էին տեսնելով ռուս հասարակութեան այդպիսի գրկաբաց ու սիրալիր ընդունելութիւնը։ Այդ օրը Ստաւրոպոլը իր քաղաքացիական քննութիւնը տուեց և գործով ցոյց տուեց, որ ռուս ժողովուրդը գիտէ իր վեհանձնութիւնը ցոյց տալ նաև դէպի վիրաւոր և օգնութեան կարիք ունեցող թշնամիները։

Վիրաւորվածներին տեղաւորել են տեղիս լազարեթները, ուր այլ գթութեան քոյրերի հետ՝ նրանց օգնութիւն են ցոյց տալիս նաև հայուհիները։

Ամսիս 6-ի երեկոյեան բերին մօտ 200 վիրաւոր ռուս զինւորներ։ Կայարանում վիրաւորներին դիմաւորեց տեղիս ուղղափառ առաջնորդը, նահանգապետը, վանազան հիմնարկութիւնների ու ընկերութիւնների ներկայացուցիչները՝ գթութեան քոյրերի հետ։ Սրբազանը մի սրտառուչ ճառ խօսեց, բարի գալուստ մաղթելով եկածներին, և կարճ աղօթքից յետոյ՝ իր կառքով վերցրեց մի վիրաւոր զինւոր և տարաւ։

Կայարանը և հիւանդանոցները տանող ճանապարհը բռնել էր հոծ բազմութիւնը, որը կանգնեցնելով կառքերը՝ տալիս էր իր նուէրը վիրաւոր զինւորներին։

Վիրաւորների կառքերը ժողովրդի թափած ծաղիկներից մի-մի ծաղկափնջեր էին ներկայացնում։

Միխական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նահանգապետը հաստատել է Թիֆլիսի վաճառականների որոշումը վիրաւորների և պահեստիների ընտանիքների օգնութեան գործը կազմակերպելու մասին։

◆ Կրուժօկի աւագների խորհուրդը քաղ. կենտրոնական կոմիտէտին է ուղարկել 875 ր., որ հաւաքվել է լօտոյից և թղթախաղից, օգոստոսի 8-ից սկսած մինչև սեպտեմբերի 8-ը։

◆ Վոլժսկօ-Կամսկի առեւտրական բանկի Թիֆլիսի բաժանմունքի ծառայողները որոշել են իրանց ռոճիկներից 2% յատկացնել պատերազմ գնացած պահեստիների ընտանիքների օգտին։

◆ Ոստիկանապետը մի յայտարարութեամբ դիմել է նահանգապետին, յայտնելով որ նոր ակումբում և Հաւլաբարի ակումբում, չը նայած արված կարգադրութեան, ազարտ խաղեր են տեղի ունենում։ Իր գրութեան վերջում նահանգապետը առաջարկում է փակել այդ հիմնարկութիւնները։

◆ «Դրօշակների օրը» կազմող բիւրօյի տրամադրութեան տակ կայ այժմ 356 կադով և 300,000 փոքրիկ դրօշակներ ռուսական և դաշնակից պետութիւնների։ Բացի այդ՝ կայ և 907 տուփ։

◆ Էլեքտրաքարշի կառավարիչը հրատարակել է հետեւեալ հրամանը. «Ի նկատի ունենալով որ հասարակութիւնից, ոստիկանապետի մակագրութեամբ, բողոքներ են ստացվում էլեքտրաքարշի ծառայողների մասին, ներկայ գրութեամբ յիշեցնում ենք կոնդուկտօրներին, որ նրանք պարտաւոր են հասարակութեան հետ վարվել քաղաքավարի, և որ խօսակցութիւնը հասարակութեան հետ, բացի ծառայութեան պարտականութիւններից արգելվում է։ Այս բանը խախտելու համար խիստ միջոցներ պէտք է ձեռք առնվեն»։

◆ Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի սանիտարական վերատեսուչ բժ. Կ. Ստեփանեան գտնվում էր Աւստրիայում և երկար ժամանակ նրա մասին տեղեկութիւն չը կար։ Այժմ նա աջողութեամբ վերադարձել է Թիֆլիս և ստանձնել իր պարտականութիւնները։

◆ Սեպտեմբերի 13-ին Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը աւտոմօբիլով մեկնեց Ալլահվերդի վանքը (Թէլաւի գաւառ) դիտելու։ Այսօր նա կը վերադառնայ։

◆ Քաղ. դումայի տնտեսական յանձնաժողովի անդամ Գ. Ն. Կէյլ քաղ. վարչութեան մի յայտարարութիւն է ներկայացրել այն մասին, որ, ի նկատի ունենալով որ վերջերս մեծ թւով մանր ու խոշոր եղջիւրաւոր կենդանիներ են բերվում քաղաք, նոյնպէս մեծ քանակութեամբ ալիւր էժան գներով, այդ պատճառով անհրաժեշտ է քննել մսի և հացի սակագները։

◆ Չորեքշաբթի, սեպտեմբերի 17-ին, Թիֆլիսի 1-ին առեւտրական դպրոցը տօնում է իր հիմնադրութեան 14-րդ տարեդարձը։ Այդ օրը աշակերտները ազատ են լինելու դպրոցից։

ԿՈՎԿԱՍ

◆ Էջմիածնից Գարեգին վարդապետը հեռագրում է մեզ. «Ուրբաթ գիշերը ժամը 3-ին վախճանվեց Սուքիաս արքեպիսկոպոսը։ Կտակել է 80,000 րուբլի։ Թաղումը կիրակի»։

ՄԱՄՈՒԼ

Մոսկվայում սկսել է հրատարակվել «Защита» անունով մի թերթ մօտ մասնակցութեամբ իշխ. Դ. Ի. Շախօվսկիի և կօօպերատային գործիչ Ա. Ա. Եվդօկիմօվի։ Առաջնորդող յօդուածում, որը կրում է «Народъ и война» վերնագիրը, թերթը գըրում է, որ ներկայ պատերազմը «անսովոր» պատերազմ է.

Մինչև խորքը նա յուզեց ամբողջ Ռուսաստանը։ Աշխատաւոր մարդիկ՝ գիւղացիները, բանւորները այս պատերազմին գնացին գիտակցաբար, ընդունեցին այն որպէս ճակատագրի որոշում։ Արդար գործի յաղթանակի հաւատով մեր ժողովուրդը կանգնած է անցքերի վարագոյրի առաջ։ Մեր զօրականները իրանց ոյժերն են լարում պատերազմի դաշտում։ Մենք, որ գտնվում ենք պատերազմի ետեւը, թիկունքին, նոյնպէս պէտք է միանանք հայրենի հողի և կուլտուրայի պաշտպանութեանը նրա համար, որպէսզի մեր մէջ չը լինեն քաղցածներ, անտէր, անապաստան մարդիկ, որպէսզի զէնքի կոչված մեր եղբայրներին օգնութիւն ցոյց տանք, որպէսզի ընդհանուր միջոցներով պաշտպանենք աշխատաւորի տնտեսութիւնները քայքայումից։

*

Պետրոգրադի «Рѣчь» լրագիրը սեպտեմբերի 9-ի իր համարում գրում է. «Հայկական ամենաազդեցիկ օրգան «Մշակ» լրագիրը արտատպելով Փ. Վերմիշեանի յօդուածը «Баку» թերթից, ասում է»։

Ապա լրագիրը առաջ է բերում «Մշակի» առաջնորդող յօդուածը համազգային ժողով գումարելու մասին։

Ի նկատի ունենալով, որ «Մշակի» առաջարկը, ինչպէս և Փ. Վերմիշեանի առաջարկը՝ համազգային ժողով գումարելու մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ՝ առիթ է տուել թիւր մեկնաբանութիւնների մի քանի լրագրների կողմից, ինչպէս Թիֆլիսի «Закавк. Рѣчь» և Բագուի «Արև» թերթը, մենք պարտք ենք համարում մի բացատրութիւն տալ։

«Արև» թերթը մի տեսակ ծաղրի է ենթարկում Փ. Վերմիշեանի առաջարկը իր մի յօդուածի մէջ, որ կրում է «Համերաշխութեան առաքեալները» վերնագիրը չակերտների մէջ, և կողմնակի կերպով կամենում է դիպչել նաև «Մշակին»։ Նա գտնում է, որ հարկ չը կայ այդպիսի մի ժողովի, որովհետև այդ ժողովի նպատակը պարզ չէ. իսկ եթէ ժողովը պէտք է գումարվի, որպէսզի հիւանդանոցներ հիմնեն կամ հայ ժողովրդի կողմից ամենահաւատարիմ զգացմունքներ արտայայտվեն, այդ ևս աւելորդ է, քանի որ հայերը ամեն տեղ արդէն կատարել են և կատարում են իրանց քաղաքական պարտականութիւնը և արտայայտել իրանց զգացմունքները։

Եթէ «Մշակը» այդպիսի մի ժողովի գումարումը առաջարկած լինէր, գուցէ «Արևը» իրաւունք ունենար անօգուտ գտնելու այդ ժողովը։ Նրա կարծած ժողովը, որպիսին արդէն տեղի ունեցաւ ամսիս 14-ին Թիֆլիսում Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում, գուցէ աւելորդ էր, քանի որ այն, ինչ որ որոշվեց այդ ժողովում, միայն մի աւելորդ կրկնութիւն էր այն ամենի, ինչ որ եղել է մինչև այսօր։ Սակայն «Մշակի» առաջարկած ժողովը բնաւ այդ տիպի և տեսակի ժողով չէ։ «Մշակը» և նրա հետ հայ հասարակութեան ստուար մասերը ցանկանում են, որ մենք ունենանք մի ազգային ներկայացուցչութիւն, հայ ժողովրդի օրինաւոր քուէներով ընտրված մի մարմին, որ իբրև աջակից և խորհրդակցական աջակցէր և օգնէր Ամենայն Հայոց Կաթողիկոսին ազգային մեծ գործերի ղեկավարութեան մէջ, որպէսզի հայ ազգի և ժողովրդի կողմից չը գործէին և հանդէս չը գային խօսելու զանազան ինքնակոչ մարմիններ, բիւրօներ և խմբակցութիւններ, որպէսզի մենք ունենայինք մի ընդհանուր ազգային քաղաքականութիւն։

Գալով «Արևի» անապարծ ինքնագովութիւններին, որ իրան և իր համախոհ մի թայֆայական թերթի անուանում է դեմոկրատական, այդ աւելի քան ծիծաղելի է...

Ինչ վերաբերում է «Зак. Рѣчь» լրագրի յօդուածին, որ սեպտ. 14-ի ժողովը ճգնում է ցոյց տալ իբրև հայկական համազգային ժողով, որ գումարվում է որպէս թէ Հայաստանի վերածնութեան ցնորքները իրագործելու, այդ աւելի քան ծիծաղելի է նոյնպէս. առաջին, որ սեպտ. 14-ի ժողովը Կ. Հ. Բ. Ընկ. կենտրոնի և իր ճիւղերի ներկայացուցիչների ու անդամների մի արտակարգ ընդհանուր ժողով է, որ պէտք է քննէր (և արդէն քննեց) նոր հիւանդանոցներ հիմնելու և պահեստի հայ զինւորների ընտանիքներին օգնութիւն ցոյց տալու հարցերը։ «Зак. Рѣчь» թերթը մեթէ չէ հասկանում, որ «հայոց ազգային ժողովը» կարող էր գումարվել միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ։ Այն «համազգային ժողովը», որի մասին խօսում են «Баку» և «Մշակ» թերթերը, բոլորովին այլ նպատակ և այլ բնոյթ պէտք է ունենայ, բայց նրա գումարման իրաւունքը պատկանում է միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին և ոչ այս կամ այն բարեգործական կամ կուլտուրական ընկերութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գորիս, 28 օգոստ.

«Մշակի» № 128-ում Գորիսի ծխ. դըպրոցի նախկին ուսուցչուհի օր. Վարդանուշ Ազատեանի նամակի առիթով, որը ուղղված է դպրոցի հոգաբարձութեան և գլխաւորապէս ինձ՝ նախկին հոգաբարձուիս, հարկ եմ համարում տալ հետեւեալ բացատրութիւնը։

Օր. Ազատեանը 1911—12 ուսումնակ. տարում հրաւիրված էր 500 ր. ռոճիկով. մի ամիս 10 օր ուշ գալուն պատճառով 55 ր. 55 կ. պակաս է ստացել. տարվայ մէջ ստացել է 410 ր. 26 կ., այլ ոչ 409 ր. 72 կ., ինչպէս օրիորդն է գրում։ Գորիսից հեռանալիս օր. Ազատեանը մի ստացական է թողել քաղաքացի մի պարոնի մօտ հոգաբարձութեանս անունով, որպէսզի մնացած 34 ր. 19 կ. ռոճիկի հաշւից 25 ր. տրվի պարոնին ճաշի փող, որը տրված է և գործերում կայ ստացականը։ Այնպէս որ օր. Ազատեանին մնում էր 9 ր. 19 կ. ընդամենը, որը ներկայ տարվայ յունվ. 1-ին իմ հեռանալու պատճառով յանձնել եմ հոգաբարձութեանը ուղարկելու։

Հոգաբարձութիւնը օր. Ազատեանի հասցէն չիմանալու պատճառով հնար չէ ունեցել ուղարկելու։ Եւ ահա այդ ժամանակամիջոցում յայտնվեց, որ օրիորդը դատարան է դիմել և փոխանակ իր ռոճիկի մնացորդ 9 ր. 19 կ. պահանջելու՝ նա 48 ր. 62 կ. է պահանջում հոգաբարձութիւնից։

Ահա ճշմարտութիւնը։

Նախկին հոգաբարձու
Ղազար Գ. Մալինցեան

Քութայիս, 7 սեպտ.

Կարդալով «Մշակի» № 195-ում Քութայիսից Ս. Նազարեանի թղթակցութիւնը, որով դատապարտում է հոգ. իշխանութեան անտարբերութիւնը դէպի Քութայիսի հայերը, որ նրանք իբր թէ մնացել են առանց քահանայի, մինչև նորի ընտրութիւնը, այս առիթով որպէս Քութայիսի ժամանակաւոր գործակալ պարտք եմ համարում հրապարակով յայտնել, որ Ռիօնում խեղդված տէր-Աշոտի թաղումից նոյնիսկ մի քանի օր առաջ, խորհրդակցելով Քութայիսի ծխ. հոգաբարձութեան հետ և ի նկատի ունենալով, որ Քութայիսի գործակալութեան գիւղերից միմիայն յարմար էր որպէս աւելի քիչ ծուխ (25 տուն) ունեցող քահանայի, հեռագրով խնդրեցի թեմակալ առաջնորդին ժամանակաւորապէս նշանակել Լայլաշի քահանային, որը և մինչև օրս հովւում է Քութայիսի հայ համայնքը և ոչ մի դէպք չի պատահել, որ «մեռելը անթաղ մնայ»։

Ինչ վերաբերում է, որ միմիայն մի կիրակի օր, օգոստոսի 31-ին, պատարագ չի եղել և ոչ «կիրակի օրերն», այդ շատ ցաւալի է, բայց պատճ չի քահանան գնացել էր իր ծխականներից մեկին թաղելու. շատ լաւ կը լինէր, եթէ վիճակում ազատ քահանայ լինէր, որին և յանձնվէր ժամանակաւոր հովւութիւնը, բայց քանի որ վիճակում ազատ քահանայ չը կայ, պէտք է Քութայիսի հայ հասարակութիւնը հոգայ շուտով իր համար քահանայ և կամ, որ աւելի նպատակայարմար է, քահանայացու ընտրել, որի առիթով ես օգոստոս ամսվայ ընթացքում երեք անգամ իմ Քութայիս եղած ժամանակս հոգաբարձական ժողով եմ գումարել և առաջարկել հոգաբարձութեանը հրաւիրել ծխական ժողով և մտածել քահանայի մասին. իսկ եթէ հոգաբարձութեան և ծխականների մէջ ինչ-ինչ պատճառներ ի նկատի ունենալով տարաձայնութիւն է ծագել և հոգաբարձութիւնը տուել է իր հրաժարականը, յամենայն դէպս դատապարտել հոգևոր իշխանութեան, կարծեմ որ, արդարացի լինել չի կարող:

Ժամանակաւոր գործակալ Քութայիսի՝
Յովսէփ աւ. քահ. Առիւծեանց

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 13 սեպտեմբերի

Կ. Հ. Բ. Ընկ. վիրաւորված զինւորների համար բացվելիք հիւանդանոցի օգտին մինչև այժմ ստացված են հետևեալ նուէրները. Եղբ. Մանթաշեան առևտրական տնից 1000 ր., Թիֆլիսի առևտրական բանկից 1000 ր., Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութիւնից 1000 ր., Թիֆլիսի II փոխատու վարկի ընկերութիւնից 200 ր., Ա. Խ. Ղարաջեանից 200 ր., տիկ. Ն. Կ. Տէր-Յովհաննիսեանից 50 ր., բժ. Բ. Նաւասարդեանից 5 ր., Օ. Մ. Յակովբեանից 20 ր., Սահվանից, Մամիկոնից և Տիգրանից 3 ր.:

Բացի այդ՝ նոյն հիւանդանոցում հիւանդների ծախսը հոգալը պատերազմի ընթացքում յանձն են առել հետևեալ տիկինները՝ Ա. Խ և Մ. Դ. Ղարաջեանների ամուսինները 3 հոգու համար, Ե. Զ. Ադամեանը, Ե. Մ. Ակելխանեանը, Ն. Ի. Ալիբէկեանը, բժշկուհի Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկը, Օ. Ի. Վարդապետեանը, Ս. Ի. Գարսոյեանը, Ի. Ի. Զաւրեանը, Ն. Պ. Կորգանեանը, Ս. Մ. Օգանէզեանը, Ս. Ի. Օհանեանը, բժշ. Մ. Մ. Թումանեանը, առևտրական տուն եղբ. Բօզարջեանները, Մ. Ա. Սարգսեանը, և Ս. Ս. Յարութիւնեանը մի-մի հիւանդի ծախսը վճարելով ամսական 36-ական րուբլի, օրական ծախս հաշւելով 1 ր. 20 կ.: Վ. Ե. Հազարապետեանը նուիրել է մի հատ երկաթի մահճակալ մատրասով, իսկ տիկ. Պապաջանեանը նշանակել է յօգուտ հիւանդանոցի ամսական 5 ր. ամբողջ պատերազմի ընթացքում:

Խորհուրդը իր քաղցր պարտքն է համարում յայտնել իր խորին շնորհակալութիւնը վերոյիշեալ նուիրատուներին, որոնք արձագանք տուին խորհրդիս կոչին՝ աջակցելու այդ մեծ գործում:

Նուիրատուութիւնները (դրամներով, մթերքով, իրերով և մահճակալների ծախսն յանձն առնելով) ընդունվում են Ընկերութեան գրասենեակում (Աբաս-Աբադսկայա հրապ. 7): Իւրաքանչիւր նուիրատուութեան մասին խորհուրդս հաշիւ կը տայ մամուլի միջոցով:

Նախագահ խորհրդի՝
Ս. Յարութիւնեան
Քարտուղար-անդամ խորհրդի՝
Յ. Շահնազարեան

Թիֆլիս, 9 սեպտեմբերի

Տիկ. Ն. Լ. Տէր-Յովհաննիսեանից ի յիշատակ իր հանգուցեալ մայր Ս. Ս. Յարութիւնեանցի ստացված է 25 ր. ս. Կարապետ եկեղեցու ծխ. դպրոցի օգտին Ներսէս ք. Քարիմեանի միջոցով, հանդերձ շնորհակալութեամբ:

Հոգաբարձութիւն

Թիֆլիս, 8 սեպտեմբերի

«Մեղու» ընկ. աշխատանքի տունը խորին շնորհակալութեամբ ստացել է Նատալիա Տէր-Յովհաննիսեանից ի յիշատակ իր հանգուցեալ մօր՝ Սոֆիա Յարութիւնեանի 50 ր. յօգուտ ընկ. ճաշարանի և արհեստանոցների, որտեղ ճաշելու և գործ են ստանալու պահեստի զինւորների ընտանիքները:

Վարչութիւն

Թիֆլիս, 12 սեպտեմբերի

Հայուհեաց Որբախնամ Ընկ. վարչութիւնը ստացել է հետևեալ նուիրատուութիւնները. Մ. Ս. Խատիսեանի կտակի համաձայն 200 ր., տ. Նատալիա Տէր-Յովհաննիսեանից ի յիշատակ իր մօր՝ Ս. Ս. Յարութիւնեանի 25 ր., մայրապետ Թայիրեանից 3 ր., տիկ. Ե. Ս. Միրզոյեանից 25 ր., մի ոմնից 1 ր.: Վարչութիւնը խորին շնորհակալութիւն է յայտնում բոլոր նուիրատուներին:

Վարչութիւն

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ·

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԴՊՐՈՑԸ ԿՆՔՎԱԾ

Րաշտ, 1 սեպտ.

Փաստ է…

Իմացել էինք՝ չէինք հաւատում, լսել էինք, բայց չէինք տեսել, և կատարվեց… Բարձր իդէալների, սրբազան սկզբունքների, վեհ գաղափարների բարձրագոչ քարոզիչների ձեռքով կատարվեց՝ ամենից սարսափեցուցիչ, ամենից քստմնելի ոճիրը… Փակել տուին և կնքեցին հայի ամենանուիրական երկու հիմնարկութիւնները, ազգի գոյութեան, քաղցր երազանքների, վերածնութեան և յուսոյ միակ ազդակները: Լանկթամուրներն ու Չինգիզխանները, Ալփասլաններն ու սուլթան Համիդները չէին այդ սրբապիղծ չարագործները, ոչ էլ կրօնական և ազգային ատելութեամբ վառված մեր թշնամիները, այլ նոյն եկեղեցու աւազանում մկրտված, նոյն ազգային դպրոցի մէջ իրանց զաւակներին բարոյական դաստիարակութեան սնունդով աճած, ազգի գոյութեան և իրաւունքների մասին բարձրաբարբառ ճառող մեր արենակիցների և եղբայրների ձեռքով՝ կնքվեցին հայ եկեղեցին և դպրոցը, պետական ներկայացուցիչների միջոցով փականք դրվեցին լոյսի և գիտութեան, հաւատի և կրօնի ազատ հիմնարկութիւնների բաց դռներին: Ո՞վ կը մտածէր, թէ կը գտնվի աշխարհում մի հատիկ հայ մարդ, որ ոտնատակ տար դարերի սրբազան աւանդութիւնները, որ արհամարհէր հայ եկեղեցու և դպրոցի ազատ գոյութեան համար թափված հարիւր հազարաւոր նահատակների անմեղ արիւնը և խիղճը մեռած, գութը մոռած զգացումները բթացած՝ դիմէր այդ սոսկալի ոճրագործութեան:

Փաստը սա է: Անցեալ ուսումնական տարին, երկու ուսուցիչների պատճառով, հոգաբարձութեան մէջ պառակտում է ընկնում: Թայֆայականները համախմբվում են իրանց երկու պարագլուխների շուրջը և աշխատում իրանցից ընտրել տալ նոր հոգաբարձուներ: Միւս խումբն էլ կազմում է չէզոքներից մի այլ բանակ և ձգնում ազգային հիմնարկութիւններն ազատել Թայֆայականների ճիրաններից: Սկսվում է պայքարը և հետևանքն այն է լինում, որ ռուսական հիւպատոսարանը կնքում է դպրոցի արխիվը: Մի օր էլ Թայֆայականները հաւաքվում են, յարձակվում եկեղեցու վրա, յափշտակում եկեղեցու բանալին և յանձնում հիւպատոսարանին: Այժմ կնքված են և դպրոցը և եկեղեցին: Քահանան և ժողովրդի գլխաւոր մասը դիմել են Սպահան, առաջնորդական խորհրդարանին:

Հարցը այնքան լուրջ է, որ դառնում է համազգային հարց:

Կնքված են դպրոցն ու եկեղեցին: Թող ազգը բարձրացնի իր ձայնը և սրբապիղծներին անարգանքի սիւնին գամէ, եթէ ոչ չար երևոյթը ամենուրեք կը կրկնվի և Թայֆայական ազգակործան ոճիրը համաճարակի բնաւորութիւն կը ստանայ…

Իսկ Էջմիածինը լուռ է… Մինչև ե՞րբ… Ա՛խ, եթէ այդ լռութիւնը չը լինէր՝ գուցէ չարիքը այս աստիճանին չը հասնէր:

Մար

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԸ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Կ. Պոլիս, 27 օգոստ.

◆ Զօրահանութիւնը չէ դադրած, բայց ընդհանուր թուլացում մը կը նշմարուի: Այսպէս՝ քրիստոնեաներէն 31—45 տարեկաններու զօրահանութիւնը դադրած է: Ինչ որ առկէ առաջ բռնուած և տարուած էին, անոնք միայն առ այժմ կը մնան զէնքի տակ: Բայց մեծ թուով արհեստաւորներ—կօշկակար, դերձակ, հիւսն՝ մեծ մասամբ հայ—դարապարհակ կաշխատցնեն: Միմիայն 3 միլիօն կօշիկ պատրաստել կուտան եղեր: Զօրահանութեան սկիզբները Կ. Պոլսոյ մէջ 3—4 օր հացի կատարեալ սով կար, այսօր 4—5 օրէ ի վեր դարձեալ այդ վիճակը կը տիրէ: Հացին օխան (3 ֆունտը 1 օխա է) առաջ 8 կոպէկ էր, այսօր 12 կոպէկ է: Շաքարին օխան 18 կոպէկ էր, այսօր 50 կոպէկ է: Հրապարակի վրայ ամեն գործառնութիւն դադրած է բացարձակապէս: Ժողովրդին թշուառութիւնը օրէ-օր կը բազմապատկուի: Կառավարութիւնը նեցուկ չունեցող զինուորներու ընտանիքներուն անձագլուխ օրական 8 կոպէկ սահմանած է, բայց անուանական. ցարդ մէկ կոպէկ չէ տուած ոչ մէկուն: Այս ալ ուրիշ առիթ մը եղաւ կարգ մը շահախնդիրներու, որ խեղճ ժողովուրդը կողոպտեն: Այսպէս, Կում-Կափուի և Պէրայի մուխթարները իւրաքանչիւր տան աննեցուկ ըլլալը հաստատող վաւերագիր մը տալու համար 5 ղրուշ (40 կ.) կը գանձեն նոյնիսկ ամենէն չքաւորէն: Հայ են այս դիւակապուտ մուխթարները, Լևոն Քիւրքճեան և Կարապետ էֆէնդիի: Պատրիարքարանի քթին տակ կը կատարուին այս շահատակութիւնները անզուսպ ու համարձակ:

Աւելի քան 7000 ուսանողներ և ուսուցիչներ իբրև պահեստի սպայ կը պատրաստուին ներկայիս: Էնվէրեան ծրագիր մըն է աս ալ ֆօն Սանդէրսի կողմէ պատրաստուած յատակագծի մը վրայ ձեւուած: Օսմանեան բանակը 6 ամսէն նոր պատրաստուած 6—7000 սպայ պիտի ունենայ այսպէսով: Ի՞նչ կըսէք սպաներու այս ֆաբրիկային, Էնվէրեան այս գիւտին: Եւ սա ալ սակայն չմոռնամ ըսել թէ՝ միակ շէնքի մը մէջ հաւաքուած խճողուած են անոնցմէ մօտաւորապէս 6000-ը, ուր ստորին սնունդ մը կը տրուի իրենց և դատապարտուած են օրական 6—7 ժամ մարզանք ընելու: Կատարելապէս տաժանակիր աշխատութեան մը դատապարտուած այս խեղճերէն 20 օրուան ընթացքին՝ 15-է աւելի մահեր պատահած են: Շատերը հիւանդացած են ու ակամայ կը հետևին դասերուն և մարզանքին, բայց ճար չկայ, ազատում չունին:

Աւելորդ չէ ըսել, թէ կառավարութիւնը մէկ մասին միայն համազգեստ կրցած է տալ, մեծ մասը իրենք շինած են հագուստներն, մէկ մասն ալ քաղաքային հագուստ կը կրեն: Այնպէս որ զինուորական համազգեստին քով կը տեսնես քաղաքային հագուստով ուսանողը և գաւառական շալվարով փաթթօցաւոր մոլլան:

◆ Թերթերը՝ թիւրքերէն և հայերէն, յունարէն կամ ֆրանսերէն՝ կէս ծաւալով կը հրատարակուին, այսինքն «Մշակի» կէս դիրքով:

Թիւրքական ութը օրաթերթեր կան, որոնց չորսը առտուան կը հրատարակուին, չորսն ալ իրիկուան: «Սաբահ», «Իկդամ», «Թանին», «Թասֆիրի Էֆքեար» առտուան թերթերն են. «Թէրջիմանը Հաքիքաթ» (Ահմէդ Աղայեվի թերթը), «Ջէրիդէյի Հավադիս», «Սէրվէթի Ֆինուն» և «Ծէրիդէյի Սօֆիյեէ» երեկոյեան թերթերն են: Ութն ալ իրարու բերան թքած՝ վերէն տրուած կարգախօսի մը համեմատ կը գրեն, լարուած գրամոֆոնի մը պէս միևնոյն եղանակը կը նուագեն, այսինքն այն միշտ, ինչ որ կը թելադրուի իրենց: Ասոնցմէ երեքը ուղղակի Իթթիհադի օրգաններն են:

◆ Սան Ստէֆանոյի մէջ երեք գերման սպաներ ֆրանսահպատակի մը շէնքին վրայէն ֆրանսական դրօշը վար առած ու ծուէն ծուէն պատռած են: Վէճը սաստկացած ու կռուի փոխուած է և երեք չորս հոգի վիրաւորուած են, կըսուի:

◆ Վերջին պահուն պատրիարքարանը թակրիրով մը դիմած և 31—45 տարեկան հայերուն զինուորութենէ ազատ կացուցուիլը պահանջած է: Մետասաներորդ ժամու եղած այս պահանջին տեսնենք ինչ ընդունելութիւն պիտի ընէ կառավարութիւնը:

Հեթում Հատեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՋԱՌԱՄԵԱԼ ԴՐՈՒԹԻՒՆԸ, արտէրիոսկլէրոզը, յոգնածութիւնը, հիւանդութիւնների հետեւանք ընդհանուր թուլութիւնը, ալկոհոլիզմի հետեւանքները եւ այլն, նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, հիւծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկւում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ:

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր:

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամակադրոշմ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը:

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք.

Профессоръ Д-ръ Пель и С-вья
С-Петербургъ.
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. Դրան

(П. 8863) 0—7 № 2

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/2. Տելեֆոն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն:
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ:

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում: Նիւթերն առնվում են ռէալ կեանքից: Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ: Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը: Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում: Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից: (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից):

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 720. 0—30

Վաճառվում է
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. հրատարակած
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
կազմեց Ա. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ
300 երես, 64 պատկեր, 5 քարտէզ: ◆ Գինն է 50 կ., իսկ Ընկերութեան գրասենեակում 35 կ., ճանապարհածախսով՝ 60 կ., վերադիր վճարով՝ 70 կ.:
Դիմել Армянское Этнографическое О-во, Тифлисъ, Лермонтовская 1.
(ե.հ.կ.) 862. 10—3

ԱՐՇ. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳ. ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱՒԵՏ. ԽԱՉԱԿԵԱՆԻ կազմած
ԴԱՍԸՆԿԵՐ
Առաջին տարի այբբենարան-ընթերցարան վեցերորդ տիպ բարեփոխված . 40 կ.
Երկրորդ տարի . . . . հինգերորդ տիպ բարեփոխված . 50 կ.
Երրորդ տարի . . . . չորրորդ տիպ բարեփոխված . 60 կ.
Չորրորդ տարի . . . . 70 կ.
Ա. Բ. և Գ. տարիները ենթարկված են հիմնական փոփոխութեան. ճոխացրած են ՁԵՌԱԳԻՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐՈՎ, ՊԱՏՄԵԼՈՒ, ՇԱՐԱԴՐԵԼՈՒ և ՆԿԱՐԵԼՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ:
Դիմել Թիֆլիս «Գիր» և «Գուտենբերգ» գրավաճառանոցներին. Երևան՝ «Արարատ» և Յովհաննիսեան գրախանութներին, կազմողներին՝ Երևան, թեմական դպրոց:
ԳՈՒՄԱՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ ԿԸ ԼԻՆԻ ԶԻՋՈՒՄ:
(ե. հ.) 859. 4—2

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
ԱՌԱՋԻՆ
ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ
Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Գոյութիւն ունի 1895 թ.

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների:
Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ԱՄՍԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՈՎ ամենօրեայ պարապմունքներով:
Դասընթացքներում աւանդվում են. պարտադիր—Հաշւապահութիւն կրկնակի իտալ., պարզ, գերմ., ֆրանս., ամերիկ. և ուրիշ սիստեմ. արդիւնաբերութեան զան. ճիւղերի, նաև գործար. և նաւթարդիւն., առևտր. թւաբ., առևտր. թղթակց., քաղաքատնտ., առևտր. իրաւունք., մուրհակի կանոնադր., առևտր. թւաբ. համրիչի վրա և վայելչագր. (ամենավատ ձեռքի ուղղումն.). ոչ պարտադիր—Օտար լեզուներ, սղագրութիւն և ռեմինգտոն:
Նիւթերը մատեանների և գործնական պարապմունքների համար առնվում են ռէալ կեանքից, ինչպէս որ պաշտօնում գտնված դէպքում:
Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին:
Ատտեստատներ տրվում են մինիստրութեան թոյլատւութեամբ:
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1914 թ.:
Խնդրագրերի ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը:
Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար:
Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար:
Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну. Николаевская, 22, Телефонъ 7—44.
(ե.հ.կ.) 749. 0—17

Լոյս տեսաւ ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ
„ԳՐԱԳԷՏ"
Հայերէն ուղղագրութեան ձեռնարկի առաջին գրքոյկը, որ բաղկացած է ձեռագիր յօդուածներից: Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձուի կողմից թոյլատրված է որպէս ձեռնարկ:
Կազմեցին Մ. ԱԲԵՂԵԱՆ, Ա. ԱԲԵՂԵԱՆ, Մ. ՄԱՏԻՆՃԵԱՆ.
ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՅԿ, երրորդ տպագրութիւն . . . . գինը 25 կ.
ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔՈՅԿ, » » . . . . » 25 կ.
ԵՐՐՈՐԴ ԳՐՔՈՅԿ, ... » 30 կ.
Դիմել Թիֆլիսի և գաւառական բոլոր գրախանութներին: Պահեստը «ԳԻՐ» գրախանութ, Թիֆլիս: Կազմողների հասցէն՝ Թիֆլիս, Ներսիսեան դպրոց:
(ե. շ.) 832. 6—4

ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ
Ինժենէր Գ. Զ. ԵՍԱՅԵԼԵԱՆ և ԸՆԿ.
Թիֆլիս, Կիրոչնայա, № 9, սեփ. տուն
Տելեֆոն № 9. Կառավարչի բնակարան 14—78.
Գործարանը պատրաստում է եւ կառուցանում տրանսմիսիաներ, ֆրիկցիոն մուֆտաներ, սեղմիչ ճախարակներ, ճախարականիւներ, շարժիչ-ծեւեր, ատամնաւոր անիւներ, ռեգուլյատորներ, փոկեր եւ այլն:
(ե.) 175. 25—24
ՇԱՐԺԻՉՆԵՐ [illegible]

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաշւապահական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
(ա. օ) Նիկոլայեվսկայա փող. 36. 863. 25—4

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Լ. ՏՈԼՍՏՈՅԻ հետևեալ երկերը.
1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Թարգմ. Սուրխաթեանի . . . . . . 30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տոլստոյի, կազմեց Ա. Բուլանժէ, Թարգմ. Սուրխաթեանի . . . . . . 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տոլստոյից, Թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.
4) ՔՈՅՐԵՐԸ, Թարգ. Դանիէլեանի . 5 կ.
5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա: Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի:
Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
10—10

Իմ. ք. Նազարեանցի գրքերից մեզ մօտ ծախվում են հետևեալները.
1) Ընտիր հատ. ա. մ. 5-դ տպ. Արձակ . . . 80 կ.
2) Ընտիր հատ. բ. մ. 2-դ տպ. Բանաստեղծ. . . 80 կ.
3) Յուշեր . . . . 30 կ.
4) Ոտանաւորներ երեխաների համար . . . 40 կ.
Գումարով գնողներին, 10-ից ոչ պակաս, 20% զեղչ, ճանապարհի ծախսը (վերադիր վճարով) մեզանից:
Մեր հասցէն՝ Тифлисъ, Авлабаръ. Константиновская ул. 3. М. М. Назарьянцъ.
(ե. հ. շ.) 818. 10—7

Մազրդու (Արէշի գաւ.) գիւղի միդասեան դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ
Վարժապետ կամ վարժուհի
Ռոճիկ 300 րուբլի, բնակարան, վառելիք և լուսաւորութիւն: Դիմել՝ ст. Халданъ (Арешск. у.) Благочинному священнику Сааку Ширванянцу.
873. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ. Лорисъ-Меликовская улица, домъ казенный